ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 2.300 — Կ. ՊՈԼԻՍ, 1904 ԱՊՐԻԼ 9 — 22 — 5 ՍԷՖԷՐ 1322 — 9 ՆԻՍԱՆ 1320 — ՈՒՐԲԱԹ

بوزانتيون
ارمنيجه يومى وسياسى غزته، صاحب امتياز و مدير مسؤولى
بوزانت كچيان
مطبعه و اداره خانه سى باب عالى جاده سنده ٢٣ - ٢٥ نومرولى
دائره مخصوصه ده در

Բիւզանդիոն

ՀԱՅԱԹԵՐԹ ԱՄԵՆՕՐԵԱՑ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԲԻՒԶԱՆԴ ՔԷՉԵԱՆ

PUZANTION
Journal Arménien Quotidien,
Politique, Financier et Littéraire
Directeur - Propriétaire
PUZANT KÉTCHIAN
Bab-Ali Djaddéssi, № 23-25
CONSTANTINOPLE

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ԱՄՕԹԸ

Կարծեմ թէ ամօթի զգացումը մեր համայնքին մէջէն տակաւ առ տակաւ իր հրաժեշտի ողջոյնը կու տայ՝ իր տեղը տալով անամօթութեան որ կամաց կամաց ընդհանուր սովորութիւն կ'դառնայ։ Այս պարագան ցաւալի է անշուշտ։ Ժամանակն ա՛յնպէս կ'պահանջէ կ'ըսեն ու անամօթութիւն կ'ընեն. լկտի չարժումներ, անպատշաճ խօսուածքներ, անամօթ քալուածք, ամէն տեսակէն ալ կայ։ Շիտակն ըսելով լուսաւորեալ այս ժամանակիս մէջ պէտք չէր որ այս այսպէս ըլլար։ Երբ կրթութեան ու դաստիարակութեան նպատակը՝ մարդուն սրտին ազնուացման, հոգիին բարձրացման, մտքին լուսաւորութեան նպաստել է՝ բոլորովին կ'չեղի եւ կ'ունենայ տարբեր հետեւանք մը։ Պատշաճութիւնը բնաւ նկատողութեան առնել չենք ուզեր, ընկերութիւնը չենք յարգեր եւ մանաւանդ մարդկային արժանապատուութիւննիս չենք քններ։ Ի՞նչ նշանակութիւն ունին ասոնք. պէտք է հանգիստը նայիլ եւ ամէնէն անպատշաճ բաներն ընել։ Քաղցրաբարոյութիւնն ալ կամաց կամաց բաւարարներու համար չնուած բառ մը պիտի մնայ եւ կամ միայն խօսակցութեանց ատեն գործածուելու համար։ Ամէն մարդ իր կողմէն գիտած ատեն այս կամ այն բանը՝ երբ կ'տեսնէ թէ անտեղի է՝ ամօթ է կ'ըսէ. երբ փոքրիկ տղայ մը իր բնակմանին եւ տարիքին բերումով անտաշակութիւն կ'ընէ՝ ամօթ է կ'ըսենք։ Ասոնք յայտնի է թէ նշանակութիւն չունին. զարմանալին այն է որ սըղան չախելով եւ ամենայն կոշտութեամբ, երբեմն նաեւ հայհոյութեամբ հանդիմանեցնել կ'ուզենք։ Խեղճ փոքրիկին ամօթ է կ'ըսեն խոշոր մարդիկ, առանց մտածելու որ իրենք իսկ տակաւին չե՛ն հասկցած թէ ի՛նչ բան ամօթ է, եւ կամ նոյն իսկ իրենց չարժումները, հայհոյանքներն ամօթալից գործեր են։ Բայց կարելի՞ որ մարդ իր ըրած թերութիւնը ճանչնայ, իր սխալին վրայ անդրադառնայ. ամէն մարդ ինքն իրեն համար անսխալ է. անսխալութեան վարդապետութիւնը չա՛տ տարածուած բան մ'է հիմա։ Եթէ կարելի ըլլար որ մարդիկ ամենքն ալ իրենց ըրածին, խօսածին վրայ անդրադառնային եւ ճանչնային սուտն ու իրաւը, աղէկը կամ գէշը, շատ չուտով վերջ պիտի գտնէին ամէն անիրաւութիւն, անտեղի գործեր, անբարոյականութիւններ, եւ որ ըստ կարգին։

Մեզ համար բառը սորվիլ հերիք է. ա՛լ ամէն բան արդէն եղած կրնայ ըլլալ. եթէ գիտես թէ ի՛նչ է բարոյականը, արդէն դուն բարոյական ունիս. ի՛նչ է ճշմարտութիւնը, վստահ եղիր թէ ճշմարտութեան աշակերտ եղած ես. եթէ գիտես թէ ի՛նչ բան ամօթ է կամ ամօթ չէ, ա՛լ հասկցած կրնաս ըլլալ եւ հետեւաբար պատուաւոր մէկն ես դուն։ Բայց կարծեմ թէ այնչափը բաւական չէ. իրապէս ունենալու է. բաւական չէ ըսել բարոյական, գիտնալու է զայն իր անձին վրայ ներկայացնել եւ ամէն անբարոյական գործերէ զգուշանալու է։ Բաւական չէ գիտնալ թէ ի՛նչ բան ամօթ է, այլ պէտք է ամօթալից գործերու մէջ ինկալէ զգուշանալ։ Վարժապետն ամէն օր դպրոցին մէջ «Մօ՛ տղայ, ամօթ է» կ'պոռայ. դպրոցին մէջ կամ անկէ դուրս իր կեանքին բոլոր մանրամասնութիւններն ամօթալից գործերով լեցուած են. ինք վարժապետ է, ա՛լ ամէն բան է. վրան թերութիւն մը չունի, սխալի մը տեղը չէ. մինչդեռ իր վրայ շատ բան կայ սրբագրելու. զոր օրինակ վարժապետ մը իր երկու աշակերտները կը յանդիմանէ, կ'չախէ, կ'ծեծէ նոյն իսկ.— պատճա՞ռ, վասն զի անոնք իրարու հետ չեն խօսիր, գժտած են, ամօթ է կ'ըսէ. բայց երբ կամեցուն մը այդ վարժապետին ներքին կեանքը քննելու ըլլայ, պիտի տեսնէք որ ինք անամօթութեան մէջ է, օրինակի համար՝ իր ծնողքին կամ իր կնոջն հետ գժտած է, անկէ բաժնուած է ու կ'սպասէ բարեկամի մը որպէս զի զիրենք հաշտեցնէ իրարու հետ։ Մեզ համար ամօթն այս է, անամօթութիւնն ալ այս է, մեր այս տեսակներուն երեսին միշտ կ'պոռանք ամօ՛թ է, անամօթութիւն չուզեր։

Ամօթի կամ անամօթութեան սահմաններուն մէջ մտնող շատ մը գործեր կան։ Գիտենք թէ անամօթութիւն է գինովնալով մէկ պատէն միւսը զարնուիլը, ամօթ է աղտոտ խօսքերով այս կամ այն մարդուն հետ խօսիլը։ Անամօթութիւն է ծանօթի մը առջեւ ուրիշ ծանօթ մը վարկաբեկ ընելը, անոր նկատմամբ անհպատ խօսիլը, անոր մասին կարգ մը անտեղի բաներ ըսելն են։ Անամօթութիւն է բարեպաշտ երեւնալն եւ կրօնական ամէնէն տարրական բաներուն մէջ իսկ թերութիւն գործելը։ Ամենամեծ անամօթութիւն է այս բարեկամի սպէս ներկայանալը, միւսին՝ տարբեր, եւ կամ մարդէ մարդ գոյն փոխելը. ասոնկները հիմա մանաւոր համեմատութեամբ մը աւելնալու վրայ են մեր մէջ. կուգայ քեզ ինքզինքը կ'ներկայացնէ բարեկամ, մտերիմ ու նոյն իսկ եղբայր, ու դուն առանց մտքէդ բան մը անցընելու կ'հաւատաս, բայց դժբախտաբար այս տեսակ մարդու մ'ըրածը բառին բովանդակ նշանակութեամբ ……. է, տեսակ մը սինականութիւն, գունափոխութիւն որ սարսափ կ'ազդէ ինծի։ Այսօր հետդ աղէկ ես, քեզմէ աղէկ մէկը չկայ, վաղն ալ ո և է բանով մը հետդ աւրուեցա՞ր, լմնցա՛ւ, քեզմէ գատ գէշ մարդ չկայ. առաջ քեզ այս կամ այն մարդը շատ թշնամի կ'ներկայացնէ, հիմա քեզ եկաւ կարգն որ քու թշնամիդ աւելի ներկայացուիս թշնամի, եւ տակաւին ուրիշ բաներ մը։ Ամօթ է ասիկա անշուշտ եւ ամենամեծ անամօթութիւն. ասանկներ շատ կան մեր մէջ։

Ամենամեծ անամօթութիւն է նոյնպէս այս կամ այն մարդը ներկայացնել անոր մտքէն չանցած թերութիւններով եւ կամ թէ ի՛նչ որ ինք պիտի ըսէ՝ ուրիշի մը բերնին մէջ դնել։ Ասանկ մէկը կ'ճանչնամ, ինչ որ ինք պիտի ըսէ, ուրիշի բերնովն է որ կ'ըսէ. կ'խորհիմ որ ասկէ աւելի անամօթութիւն, լրբենութիւն կրնա՞յ ըլլալ. ասոր վատութիւն, ստորնութիւն ալ կ'ըսեն։ Բայց հիմա սովորական դարձած է մեզ համար. բնական էր որ եթէ ամօթ ըսուած բանն ունենար այս տեսակ վատհոգի մարդկային արարած մը, ասանկ ստորնութենէ ախորժ պիտի չզգար, բայց ա՛լ անոր մէջ մեռած է, ես իմ մասիս ասանկներէ կ'սոսկամ եւ կ'ահաբեկիմ։ Արդէն գոյն փոխելը տեղին համեմատ, օձին չապիկ փոխելուն կ'նմանի. շատեր թերեւս այս բանը վարպետութիւն նկատեն. ընդհակառակն ամենամեծ վատութիւն եւ մանաւանդ ստորնութիւն է։

Անամօթութիւն է նաեւ որ վարժապետ մը, դաստիարակ մը գինովնայ, դասի ատեն բերանն ո՛չ միայն ծխախոտի ծխնելոյզ այլ եւ օղի ու գինի հոտի, եւ երիկունները, կամ կիրակի ու տօն օրերը, այս կամ այն գինետունը բազմած երեւի, օղիի գաւաթներուն առջեւ, եւ չար օրինակ ըլլայ իր աշակերտներուն։ Ասանկ վարժապետներ մէկէ աւելի ունինք։

Անամօթութիւն է անշուշտ ո և է կրթական, եկեղեցական, թեմական, մատակարարական պաշտօնի մը վրայ մէկը չուզել տեսնել եւ սակայն տեսնել որ տակաւին կ'չարունակէ.— տեսակ մը անզգայութիւն ալ կ'ըսեն ասոր։ Ինք ալ երբ գիտէ որ չեն ուզեր զինքն ու տակաւին կ'չարունակէ մնալ պաշտօնին գլուխը՝ չիտակն ըսելով մարդը պինդերես ըլլալու է, ա՛լ անամօթութեան եւ անպատկառութեան հետեւանքով բոլորովին կարծրացած։ Եթէ մարդն ամօթ եւ պատկառանք ունենար, բնական էր որ ինքնին պիտի քաշուէր պաշտօնէն եւ նոյն իսկ իր անձին չահն ա՛յս կ'պահանջէր։

Ճիշտ այս տեսակ մարդիկ չատ կան մեր մէջ. մարդը թաղական է, ինք գիտէ որ գործ չի տեսներ, եկեղեցիին ունեցածը կ'ծախէ ու մնտուկը պարտքի տակ կ'խոթէ. գիտէ որ ժողովուրդն երեսին կը պոռայ ու հրաժարէ՛ կ'ըսէ, իր գործած զեղծումն իր երեսին կ'զարնուի, բայց տակաւին անամօթաբար կ'չարունակէ, այն վստահութեամբ եւ այն անպարծութեամբ թէ օգտակար պիտի ըլլայ։ Այս տեսակ մարդոց հազար պոռայ, հազար խրատէ որ հրաժարին. իրենց գիտցանէն բնաւ չեն չեղիր, կ'յամառին կ'մնան, վասն զի չեն գիտեր թէ ի՛նչ է ամօթն ու չունին անոր զգացումն իրենց անձին մէջ։ Անամօթութիւնը մարդն անզգայ կ'ընէ։ Եթէ իրենց երեսին թքնելու ըլլաս՝ քրիստոնէական (!) համակերպութեամբ մը՝ անձրեւ կուգայ պիտի ըսեն։ Փափաքելի էր որ ամօթի զգացումը մեր մէջ աւելի տարածուէր։

ՄԱԺԱՆ

ՎԱՐԶ ԽՕՍՔԵՐ

ՄՆԱԿԵԱՆ

«Ցարուցեալն ի մեռելոց» մեր մէջ է հիմա։ Շաբաթ գիշեր սկզբնաւորումը կ'ընէ Գատըգիւղ, Սքիւտրի մէկ խաղով։ Սատտու մը, հազիւ աչուըները բացած իրիկուան յոգնութենէն, թղթաբերով հասած թերթերուն մէջ զարմանքով տեսաւ ի Պրուսա, թէ «չէ յաստեաց», եւ բաւական հազուադէպ բարեբախտութիւնն ունեցաւ իր կենդանութեանն իսկ կարդալու իր վրայ հիւսուած ներբողները։ Բայց անշուշտ ունեցաւ սկեպտիկ քմծիծաղ մը չռայլուած բոլոր այս ներբողներուն հանդէպ, զի ինք ո՛րքան ալ համեմատաբար դիւրակեցիկ արուեստագէտ, եւ տէր կացութեան մը, որուն չատեր պիտի փափաքէին իր արուեստակիցներէն, բայց ունեցաւ տագնապի վայրկեաններ. հացի խնդիրը զինք ալ տանջեց, մանաւանդ սկիզբի ժամանակներուն մէջ, ա՛յնչափ որ պահ մը բարոյական ընկճումը պատեց իր էութիւնն համակ, եւ թէպէտ ցաւով, այլ վերջապէս ստիպուեցաւ հեռանալ իր նախասիրած ասպարէզէն, երթալ ինկնալու համար ուրիշի մը մէջ, որ երբեք աւելի վառ գոյներով չէր ներկայանար քան բեմական կեանքը,—ուսուցչական ասպարէզն ըսել կ'ուզեմ։ Բայց եթէ Մնակեան ,բառին բովանդակ նշանակութեամբ, չեղաւ «մեծ արուեստագէտ», այլ եղաւ տոկուն, չարքաշ անձնուէրութիւն մը հոգեկին փարած իր գործին, ժամանակին ոգիին, միտքերու տրամադրութեան քաջատեղեակ արուեստագէտ մը, բարոյականի տարածման լաւագոյն գործի մը համարեց մանաւանդ բեմը, եւ առ այս լիովին իրաւունք տուաւ իրեն այն ջերմ ընդունելութիւնը զոր գտաւ միշտ եւ ամենուրեք, մանաւանդ նորընտիր թատերախաղերու ժամանակ։ Ընտանիքի արուեստագէտն է ինք, եւ այս բացառութիւնը կարծեմ լաւագոյն բացայայտիչն է իր գովելի գործունէութեան։ Արուեստագէտ իր անուրանալի արժանիքէն դուրս, երբ մարդ, բարի մէկն է Մնակեան. նախանձի որդն երբեք չկրծեց իր սիրտը. բարեացակամ աչքով նայեցաւ բոլոր այն նորահաս դերասաններուն զորս ինք կ'հրահանգէր. իր թեւերուն տակ կ'ծելէին, կ'բողբոջէին անոնք, թէեւ չկրցաւ միշտ տալ վերաբերում գտնել անոնց կողմէ։ Բայց, ինչպէս ինք ալ ըսաւ, արգահատանքով նայեցաւ բոլոր ասոնց վրայ, քաջ գիտնալով որ «վարունգը նուէր ընդունողը միշտ ծուռ է պիտի ըսէր անոր համար»։

Հիմա մեր մէջն է սիրելի արուեստագէտը, եւ քանի մ'օրէն պիտի սկսի իր ձեռնտուութիւնը բերել նաեւ բարեսիրական հաստատութեանց ի նպաստ տրուելիք ներկայացումներու ։ Ահա՛ կուգայ ամառը, ուր յաւիտենական սեւ բըլէնկողին մէջ փակ, գլխահակ, թատրոնին քայլերը պիտի ուղղէ Գատըգիւղի նաւամատոյցին զբօսավայրը, ուր կ'կլլակի բարդ ի բարդ ծուխերուն մէջէն, վերջալոյսի յստին ճառագայթներովը վառ ի վառ, ոսկեծուփ Մարմարային պարզած հիանալի համայնապատկերին առջեւ, պիտի ջանայ պահ մը մոռնալ օրուան տաժանքը։

ՊԱՐՈՅՐ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՆ Ի ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

Ասխաբադի (Միջին Ասիա) Հայ կանանց բարեգործական մարմինը 1905 թւի մանրամասն հաշիւը հրատարակած է, որից երեւում է որ ընկերութիւնը ունեցել է այդ տարին 80անդամուհիներ։ Ընդհանուր մուտքը եղել է 2907 ր. և ընդհ. ծախքը եղել է ընդամէնը 1695 ր.։ Ներկայ տարւայ յունվարի 1ին ընկերութիւնն ունէր պետական բանկի խնայողական արկղում 1050 ր. և անձեռնմխելի գումար 161 ր.։ Այդպիսի մի հեռաւոր անկիւնում գործող մի փոքրիկ մարմին ամէն գովեստի ու խրախուսանքի արժանի է։

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԴԱՏԵՐՈՒ ԱՌԹԻՒ

Ալէքսանդրոպոլում Մարտի 20—22ին Երեւանի Նահանգական դատարանի ժամանակաւոր բաժինը քննեց Ալէքսանդրոպոլի բնակիչ Հայկ Ամատունու, Սիմէօն Ցարութիւնեանցի եւ Մեծ—Թուսքեանդ գիւղի քահանայ Տէր—Ցովհաննէսեանցի գործը, որոնք մեղադրվում էին պատժական օրէնսգրքի 264դ. յօդուածի հիման վրա։ Դատարանի կազմը հետեւեալն էր. նախագահ՝ Ֆ. Կ. Բաքալօ, անդամներ՝ Ա. Ֆ. Մատուսեվիչ եւ Ն. Գ. Եակուշենկօ. մեղադրում էր Երեւանի նահանգական դատարանի պրոկուրոր Ն. Ա. Գլազօլոֆը՝ իսկ պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Ն. Կ. Մուրավիեվը (Մոսկվայից), Լ. Ա. Խոմենտովսկի, Տ. Ն. Ցովհաննէսեանց եւ երդուեալ հաւատարմատարի օգնական Գ. Ի. Խատիսեան (Թիֆլիսից)։ Գործը քննվում էր դռնփակ։ Դռնբաց յայտարարված վճռով մեղադրեալները յանցաւոր ճանաչվեցին պատժական օրէնսգրքի 266րդ յօդուածի հիման վրա (կալուածական գործերու ...) եւ դատապարտվեցին բանտարկութեան—Ցովհաննէսեանց քահանան եւ Հայկ Ամատունին 3ական ամիս, իսկ Սիմէօն Ցարութիւնեանը 6 ամսով։

ՆԱԽԱՏԱԿԱՆ ԽՕՍՔԻ ՄԸ ԳԻՆԸ

Մարտի 18ին Բաքուի նահանգական դատարանում քննվեց երդուեալ հաւատարմատար Ն. Ի. Սվենտորժեցկու Աբրահամ Ցովսէփեանին խօսքով վիրաւորելու գործը։ Փաստաբանը գործ է պաշտպանել Ցովսէփեանի համար եւ վարձի առիթով տարաձայնութիւն է ծագել, որի ժամանակ փաստաբանն ասել է իր յաճախորդին. «մարդ եղէք եւ ոչ Հայ»։ Ցովսէփեանը դիմել է հաշտարար դատաւորին, որը 1903 թւի հոկտեմբերի 29ին արդարացրել է Սվենտորժեցկուն։ Նահանգական դատարանում Սվենտորժեցկին խոստովանվեց, որ ասել է այդ բառերը Ցովսէփեանին, բայց պնդեց, որ դրա մէջ վիրաւորական ոչինչ չի տեսնում ինքը։ Դատաւորը առաջարկեց հաշտութիւն, իսկ Պ. Ցովսէփեանը պայման դրեց—«եթէ Պ. Սվենտորժեցկին կ'տայ Կարմիր Խաչի օգտին 100 րուբլի, կ'հաշտվեմ»։ Երդուեալ հաւատարմատարը չուզեց հաշտուել։ Այն ժամանակ նահանգական դատարանը, գործը դռնբաց քննելով՝ մեղաւոր ճանաչեց Սվենտորժեցկին եւ ենթարկեց նրան հետեւեալ պատժին—կա՛մ 10 րուբլի տուգանք, կամ 2 օր բանտարկութիւն։

ԴՊՐՈՑՆԵՐՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՄԸ

Թէոդոսիայից գրում են. «Ամբողջ հինգ թէ վեց ամիս է, որ տեղիս Հայոց ծխական երկսեռ դպրոցը զուրկ է հայերէն լեզուի դասաւանդող ուսուցչից։ Ինչ ինչ պատճառներով՝ ուսումնական տարվայ սկզբում դասաւանդող ուսուցիչ Թամոյեանը թողեց եւ հեռացաւ դպրոցից··։ Անտարբեր է ժողովուրդը, լուռ են եւ երեցփոխն ու քահանան։ Ի՞նչ կ'ըլլայ խեղճ աշակերտների հալը··։ Չէ՞ որ, պարոններ, դրա հնարը կայ. հրաւիրեցէք գործին տեղեակ մի ուսուցիչ եւ հասարակական պատասխանատուութեան ծանր կշիռքից կ'ազատվէք։

*** Գրօզնայից գրում են. «Չը նայելով որ տեղիս քահանան ստանում է որոշ վարձ այստեղի քաղաքային դպրոցից եւ գիմնազիայից, բայց նա իր պարտականութիւնը չէ կատարում։ Օրինակ, երբ մօտենում է ռոճիկ ստանալու ժամանակը, քահանան գնում է դպրոցները եւ մէկ երկու օր պարապում է, իսկ ռոճիկը ստանալուց յետոյ ուսումնարանները չէ յաճախում։ Աշակերտների եւ աշակերտուհիների մեծ մասը մայրենի լեզուն անգամ չգիտեն։ Մինչեւ ե՞րբ պէտք է այսպէս չարունակեն անխիղճ եւ անզգայ կրօնուսոյց քահանաները, որ ազգին մատաղ որդիքը իրենց խնամոց յանձնուած է, որ մինակ իրենց գրպանին կ'աշխատին եւ սուրբ պարտականութիւննին չեն կատարեր խղճի մտօք։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌԱՒ

Օդեսսայի քաղաքապետի Վէտօմօֆի պաշտօնական հրատարակութեան մէջ տըպված է քաղաքապետի հետեւեալ կարգադրութիւնը. «Թագաւորի բոլոր հպատակները, ի՛նչ դաւանութեան եւ ազգութեան էլ պատկանելիս լինեն, օգտվում են օրէնքի միահաւասար պաշտպանութեամբ եւ խնամով եւ միայն Ռուսաստանի թշնամիները կարող են ներքին վէճ ծագեցնել։ Դրա համար արգելվում է քաղաքապետութեան սահմաններում տարածել գիտաւորեալ սուտ լուրեր, որոնք վրդովեցնում են ազգաբնակութեանը, թէ՛ բանաւոր, թէ՛ գրաւոր եւ թէ տպագրութեամբ։ Այս բանում մեղաւորները կ'ենթարկվեն մինչեւ 500 ր. տուգանքի կամ մինչեւ 3 ամիս բանտարկութեան»։

** Պաքուի Նաւթարդիւնաբերողների խորհուրդի յատկացրած 150,000 րուբլուց 100,000 ր. նշանակված է յանձնելու Կարմիր Խաչի կարգադրութեանը, իսկ 50,000 ր. պատերազմում վնասուած անդրկովկասցի զինուորականներին ու նրանց ընտանիքների օժանդակութեան համար։

ԲԱՆԱՔԱՂ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԵՂԱԾ ԳԱՆԳԱՏՆԵՐՆ ՀԻՄՆԱՒՈ՞Ր ԵՆ

Հասարակութեան մէջ ընդհանուր կարծիք մը կայ թէ Ապահովագրական Ընկերութիւնք հակամէտ են միշտ հրդեհ մը պատահած ժամանակ զրկանք ընել ժողովրդեան իրաւանցն եւ պատճառ կ'փնտռեն խնդիր հանելու օգտուելով գլխաւորապէս իրենց ապահովագրական մուրհակներուն առաձգական տրամադրութիւններէն, որք կրնան պարագայից համեմատ ուզուած կողմը քաշուիլ։

Այս կարծիքն ա՛յնքան ընդհանրացած է եւ ա՛յնքան տեղ կ'բռնէ հասարակութեան մտքին մէջ որ ապահովագրական խնդրոյ մը վրայ վիճաբանութիւն ծագած պահուն ամէն ոք, մեծէն պզտիկ ու հասկցող թէ չհասկցող, բառ մ'ունի ըսելիք Ընկերութեանց դէմ։ Հազուադէպ չէ այդ կարգի վիճաբանութեանց ներկայ ըլլալ հասարակաց վայրեր՝ զբօսարան թէ չոգենաւ եւ մինչեւ իսկ տուներու մէջ, կ'բաւէ որ քանի մը հոգի ժողված ըլլան տեղ մը, ատոր մէջ գտնուի նաեւ ապահովագրութեամբ զբաղող անձ մը, մանաւանդ երբ Պոլսոյ մէջ յաճախադէպ եղող հրդեհներէն մին գայ օրուան խնդիր ընել ապահովագրութիւնը։ Ընդհանուր օրէնք է որ այդ կարգի պարագաներու մէջ ապահովագրութեան գործակալը մինակ մնայ ներկաներուն դէմ եւ ամէն ոք խղճի պարտք համարի Ընկերութեանց նպատակն ու վարմունքը մըոտելու։ Դժբախտութիւն մ'է որ չատ անգամ պատուաւոր դիրքի տէր եւ բանիմաց անձինք ալ կան ասոնց մէջ որ Ընկերութեանց դէմ նախապաշարուած են եւ միեւնոյն ջրով կ'լուան զանոնք հաւասարապէս՝ առանց խտիր դնելու գէշին ու աղէկին մէջ, որովհետեւ այս կարգի անձերու կարծիքը կշիռ ունի եւ կրնայ ժողովրդեան մտքին վրայ ազդել՝ գէշ հոսանք մը յառաջ բերելով ընդդէմ ապահովագրութեան, հոսանք՝ որուն վնասը անուղղակի կերպով ժողովուրդն է որ կը կրէ միշտ։ Այս պատուական անձանց համոզումն այն է որ Ապահովագրական Ընկերութիւնք դիտմամբ առաձգական պայմաններ դրած են իրենց մուրհակներուն մէջ, որպէս զի ի հարկին կարողանան գործածել ժողովրդեան դէմ, եւ ամէն անգամ որ խնդիր ըլլայ վնաս մը վճարելու, կ'աշխատին օգտուիլ իրենց այս առաւելութենէն՝ մէջտ բան մը կտրելով տրուելիք գումարէն. եւ որովհետեւ ժողովուրդին խելքը չի հասնիր բոլոր այս պայմաններուն բառական իմաստին, ոչխարի պէս կ'վճարէ դրամը, միտքէն իսկ չանցընելով որ օր մը չէ օր մը ի՛նքը պիտի ըլլայ միշտ տուժողը։

Տեսնե՛նք սակայն թէ իրօք այսպէ՞ս է, եւ թէ ժողովուրդն ալ խնդրոյ տեղի չի՞տար արդեօք ապահովագրութեան դիմած ատենը, անհոգութեամբ կամ չահադիտութեամբ չարժելով։ Յանցանքն Ապահովագրական Ընկերութեա՞նցն է միշտ ,թէ ժողովուրդն ալ ծագած դժուարութեանցը մէջ մեծկակ բաժին մ'ունի։

Առանց խնդրոյն խորը մտնելու եւ ուրիշ ատենի վերապահելով մանրամասնութեանց վրայ ուսումնասիրութիւն մ'ընել եթէ պէտք տեսնուի, կ'բաւականանանք այսօր հասարակաց կարծիքին դէմ ելնել հոս եւ յայտարարել թէ Ապահովագրական Ընկերութիւնք պարկեշտօրէն կ'վարուին ընդհանուր առմամբ եւ չատ հազուադէպ է որ ինքզինք յարգող Ընկերութիւն մը վճարում ըրած ատենը խնդիր հանելու ելլէ՝ պարզ չարաշահութեան մը սիրոյն համար։ Եւ ի՞նչու ընէ. Ընկերութիւն մը որ ո և է ապահովագրութիւն մը կ'ընդունի՝ գիտէ թէ մօտաւոր կամ հեռաւոր միջոցի մը մէջ ապահովագրեալ գումարը վճարելու պիտի կոչուի բնականաբար եւ հետեւապէս ըստ այնմ կ'բռնէ իր հաշիւը՝ առանց երբեք միտքէն անցընելու այս կարգի մանր մունր օգուտներուն վրայ հիմնել իր չահերը, ինչ որ տնտեսագիտութեան առաջին սկզբունքներուն հակառակ պիտի ըլլար։ Շահը, ամէն օրինաւոր Ընկերութեան համար, …….ներուն աւելնալուն մէջ է միայն, եւ այս ալ պատահած վնասներուն ԱՆՄԻՋԱԿԱՆ ու ԿԱՆՈՆԱՒՈՐ հատուցմամբը կրնայ յառաջ գալ՝ քանի որ ատո՛վ է միայն որ Ընկերութիւն մը կ'յաջողի անուն չինել եւ հասարակութեան համակրանքը գրաւել ուր տեղ որ աշխատելու միտք ունի։ Կ'բաւէ ակնարկ մը նետել Ապահովագրական Ընկերութեանց տարեկան հաշուեցոյցերուն վրայ, համոզուելու համար թէ այս կարգի մանր մունր կտրատումներէ բան մը չեն հասկնար անոնք։ Առնե՛նք օրինակի համար «Ինիօն»ի պէս խոշոր ընկերութեան մը հաշուեցոյցը. Ընկերութիւն մը որ տարեկան ՔՍԱՆ ԵՒ ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ֆր. ……. կ'գանձէ, ինչպէս կարեւորութիւն ……. ……. զեղծումներու ……. կրնան իր անունին արատ բերել եւ իր այդ հսկայ գանձումը մրանգամ ընդ միշտ վտանգել։ Կ'տեսնուի ուրեմն որ ընկերութիւնք հարկադրուած են ՆՈՅՆ ԻՍԿ ԻՐԵՆՑ ՕԳՏԻՆ համար ուղղութեամբ չարժիլ, բայց բնական է որ չեն ալ ուզեր խաբուիլ ու ……. ……. աւելի մ'աւելի վճարել։ Եւ որովհետեւ գիտեն թէ հասարակութիւնն հաւաքական մարմնոյ մը դէմ գտնուելուն՝ ընդհանուր առմամբ խիղճ չըներ ԱՒԵԼԻՆ պահանջելու ամէն անգամ որ առիթ ներկայանայ վնաս մը կարգադրելու՝ ինչպէս որ օրինակները կան ու կը պատահին ամէն օր, օրինաւոր կ'գտնեն իրենք ալ զգուշաւորութեան ամէն միջոց ձեռք առնել՝ մանաւանդ որ ամէն կարգի մարդիկ կան իրենց յաճախորդաց թի-

---

ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆԻ»Ի

ԼՕՐՏ ԼԻԹԹԸՆ (56)

ՊՈՄՊԷԻԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

ՎԷՊ ՀԻՆ ՀՌՈՄԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԺԱ.— ԳԵՏՆԱՓՈՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Սօսիի այսպէս խօսած միջոցին, Նիտիա տարօրինակ յաջողութեամբ մը մինչեւ ժամէրթը սահեր գացեր էր, առանց աղմուկի պարտէզէն անցած եւ դրան մօտեցած էր երբ յանկարծ ականջին զարկաւ ոտքի ձայն մը եւ արտասանութիւն մը որ անծանօթ չէր իրեն եւ ուրկէ կ'առնէր. Արբակէսին ձայնն էր այդ։

Նիտիա կեցաւ, չուարած, դողդողուն, բայց յանկարծ յիչեց թէ գաղտնի ճամբայ մը կար ուրկէ Արբակէս իր հիւրերը կ'մտցնէր ծածկութեան երեկոյթներ տուած գիշերը։ Այս ճամբան տանը չուրջը կ'դառնար եւ մինչեւ պարտէզին դուռը կ'յանգէր։ Այն ատեն ետ դարձաւ քայլերը, նեղ սանդուխէ մը վար իջաւ եւ ստորերկրեայ ճամբան բռնեց։ Բայց դուռը ,ուրկէ պարտէզ պիտի ելնէր, գոց էր այդ միջոցին. Արբակէսի եւ Գալէնոսի ձայները արձագանգ կուտային. սարսափահար դէպի յառաջ վազեց, իր չուրջը տիրող խաւար ու պաղ օդէն գուշակելով թէ մեծավարժամ բնակարանին գետնափորներուն մէջ կը գտնուէր. ապահով տեղ մը փնտռեց պահուըտելու համար, բայց Արբակէսի ձայնը կ'չարունակէր հալածել զինք, եւ իրեն այնպէս թուեցաւ թէ զինքը կ'փնտռէին։ Քայլերը չտապեց դարձնել, ձեռքերը դէպի առաջ, սիւներուն չզարնուելու եւ չմտանգուելու համար։ Ցուրտն հետզհետէ կ'սաստկանար, վայրկեան մը կեցաւ չունչ առնելու համար, բայց ոտքի ձայները նորէն թնդացին ականջներուն, վերջապէս ինքզինքը պատի մը դէմը գտաւ. Ինչպէս պիտի ընէր հիմա, դուռ մը, պզտիկ անցք մը չկար, ո՛չ իսկ պահուըտելու տեղ մը, իր անձկարանքին մէջ. ուժով մը սիւնի մը զարնուեցաւ եւ վար ինկաւ. բայց այս անկումէն դժգոհ չեղաւ, որովհետեւ ճիշտ հոն, խաւոյի պէս տեղ մը կար ուր կծկուեցաւ պզտիկ մարմինովը եւ չնչահատ իր վախճանին սպասեց։

Արբակէս եւ քահանան կ'յառաջանային միշտ դէպի գանձերու սենեակն որ գետնափոր ընդարձակ … մ'էր, ցած եւ հաստ ու կարճ սիւներով բռնուած։

Արբակէսին ձեռքի աղօտ լոյսին ստուերուն կենդանիներ կ'արթննային եւ կ'անհետանային պատի ճեղքերուն մէջ։

Գալէնոս սարսուռ մ'ունեցաւ եւ աչքերը չորս կողմը պտտցուց սոսկումով. միտքը կ'տանջուէր։—«Ո՞վ կրնայ հաւատալ թէ այս ամայի գետնափորներուն չնորհիւ կ'ապրինք վերի փարթամ ու պերճ սրահներուն մէջ», ըսաւ Արբակէս հեգնական ժպիտով մը։

—Սա ճամբան դժոխքը կ'երթայ հարցուց Գալէնոս, ծայր չունի կարծես։

—Երեւոյթէն մի՛ խաբուիր, բարեկամս այս ըսած ճամբադ դէպի լոյսը կ'առաջնորդէ, հետեւէ ինծի, մեր երթալիք տեղն ալ կողմն է։

Այն վայրկեանին ուր երկուքն ալ կ'անցնէին կոյրին քովէն, Գալէնոս յարեց. —Զուարթ Կլաւքոսը վաղն ինքզինքն սանկ մութ ու զարչահոտ տեղ մը պիտի գտնէ ահա։

—Բայց հետեւեալ օրն ալ կրնայ առատ չունչ առնել, պատասխանեց Ափրիկեցին, չարագուշակ ձայնով մը, կրկէսը բանտէ մ'աւելի ընդարձակ է եւ աղուոր օդ կայ հոն, սակայն քու մէկ բառդ կրնայ ազատել Կլաւքոսն եւ անոր տեղ Արբակէսն յանձնել գազաններուն։

—Այդ բանն երբեք չեմ կարող ըսել ես, յարեց Գալէնոս։

—Կ'հաւտամ, սիրելիդ իմ Գալէնոս, գիտեմ թէ բնաւ պիտի չկրնաս խօսիլ։

Արբակէս մտերմաբար քահանային թեւին կրթնած, աւելցուց. — Տեղերնիս հասանք։

Իր ձեռքի լապտերովը լուսաւորեց յանկարծ պատին մէջ թաղուած երկաթապատ մեծ դուռ մը։ Արբակէս, քովէն պզտիկ բանալի մը հանեց որ, ժանգոտած կղպանքին մէջ դժուարաւ դարձաւ, երբ թէ չուզելով որ իր տէրը Գալէնոսի ցուցնէ հոն պահուած գանձերէն չնչին մաս մ'իսկ։

Ագահ Գալէնոսի սիրտը կ'բաբախէր ուժգնապէս։

—Մտի՛ր ներս, սիրելիս, ըսաւ Արբակէս դուռը բանալէ վերջ, մտի՛ր, ես լապտերովս կ'լուսաւորեմ որպէսզի կարենաս դիտել լեռան պէս դիզուած ոսկիներս։

Անհամբերն Գալէնոս յառաջ անցաւ անմիջապէս։ Բայց Արբակէս, առանց ժամանակ կորսնցնելու, զայն ուժով մը ներս հրելը, եւ վրայէն դուռը գոցելն ու կղպելն մէկ ըրաւ. յետոյ երկար քրքիջ մ'արձակեց եւ ըսաւ.—Գիտէի որ բնաւ պիտի չը կրնաս խօսիլ։ Գալէնոս վար գլտորած էր սանդուղէ մը, գլուխը զարնելով քարէ աստիճաններուն, բայց չուտով ինքզինքը գտաւ առանց ցաւ մ'զգալու անկումէն, Յետոյ վեր ելաւ բռնեց դուռն եւ ամբողջ ուժովն զայն երերցնել ուզեց, գազանի մը պէս պոռալով.— Դուրս հանէ զիս, Արբակէս, օ՛հ, ազատէ զիս եւ քեզի թող ըլլան ոսկիներդ։

Այս բառերն հազիւ թէ կ'ելնէին երկաթակուռ դուռնէն.

Արբակէս նոր քրքիջ մ'ալ արձակեց եւ պատասխանեց։

—Հաղտեղի ոսկիներն հացի փչրանք մ'իսկ չեն կարող կերցնել քեզի·· մեռի՛ր, թշուառական, քու հառաչներդ արձագանգ պիտի չտան չուրջդ, եւ ո՛չ ոք պիտի մտքէն անցընէ թէ Արբակէսը մատնել ուզող մէկը հոդ անօթութենէն մեռած է, Ցը՛տես բարով։

—Օ՜հ, գթութիւն, ողբաց յուսահատօրէն Գալէնոս, վայրա՛գ մարդասպան, գթա՛ վրաս, հրէ՜շ։

Գալէնոսի աղաղակները սա խորհրդածութիւնն ընել տուին Արբակէսի.—«Զարմանալի բան, կարծես մէկը կայ որ կ'արգիլէ զիս, սա ձայնն առ յաւէտ չմարած, մեկնիլ Պոմպէյէն։ Թէեւ հարստութիւնս ուրիշ կողմ պահուած է, բայց ծառաներս, զայն փոխադրած ատեն, կրնան լսել բանտարկեալին ողբերը, բէ՜հ. եթէ երեք օրէն վերջն ալ ապրի, իր ձայնն այնքան տկարացած պիտի ըլլայ արդէն որ դուրսէն լսելի պիտի չըլլայ երբեք։ Աս ասանկ է, այո՛, վախնալու բան չկայ։ Յանուն Իսիսի կ'ըսեմ որ ցուրտ կ'ընէ հոս, գաւաթ մը գինի խմել գէշ պիտի չըլլար···։

Եւ Ափրիկեցին, իր չքեղ վերարկուին մէջ փաթթուելով, փութաց վերի յարկն ելնել։

ԺԲ.—ՆԻՏԻԱ ԵՒ ԳԱԼԷՆՈՍ

Հզօ՛ր Աստուած, ինչ կ'լսէր Նիտիա. Ափրիկեցիին տեղ Կլաւքոսն էր դատապարտուողը։ Իր մտքէն ուրիշ մէկը կար որ սակայն կրնար ազատել զայն, ինքն այժմ այդ բանտարկեալին ողբերը կ'լսէր. անոր աղերսանքն ու աղօթքները կ'իմանար եւ գիտէր անոր բանտարկութեան պատճառը։ Օհ, եթէ կարենար փախչիլ, երթալ ամէն բան պատմել դատաւորին՝ թէ Գալէնոսն եւ թէ Կլաւքոսն ազատած պիտի ըլլար։

Կոյրին յուզումն այնքան չատ էր որ քիչ մնաց նուաղելուն, բայց կրցաւ վերջին ճիգ մ'ընել ինքզինքը կանգուն պահելու եւ Արբակէսի ոտքի ձայնն հեռանալուն պէս, ոտքի ելաւ եւ կրցածին չափ արագ քայլերով մօտեցաւ Գալէնոսի գըտնուած տեղը։

EDWARD BULVER, LORD LYTTON
(The last days of Pompeii.)

(Շար.)

ւին մէջ, և ահա՛ ասիկա է որ կ'ծագի խնդիրը։

Թերևս ոմանց հաճոյ չերևին մեր այս տողերը, բայց անկողմնակալ խմբագրութեան մը համար երկու կողմն ալ մտիկ ընել պէտք է՝ որպէս զի տրուած վճիռը անիրաւ չըլլայ։ Ապահովագրութեան մէջ քանի մը առողջ սկզբունքներ կան որոց դէմ մեղանչել ներելի չէ և ոչ մէկուն։

Ապահովագրութիւն մը կնքած ատենը հասարակութիւնը պարտաւոր է․

Ա․ Լաւ ընտրել Ընկերութիւնն ու անոր Գործակալը։

Բ․ Հոգ տանիլ ապահովագրող միջնորդին պարկեշտութեանը։

Գ․ Սակարկութեան չմտնել գնոյն վրայ, քանի որ միօրինակ սակացոյց մ'է որ կ'գործածէ այժմ առ հասարակ բոլոր Ընկերութեանց մէջ։

Դ․ Արժէքէն աւելի չապահովագրել երբէք։

Ասոնցմէ դուրս ուրիշ հարկաւոր պայմաններ ալ կրնան գտնուիլ, բայց ասոնք են որ գլխաւոր հիմունքը կ'կազմեն ամէն օրինաւոր ապահովագրութեան և որոց երբեք ուշադրութիւն չըլլալուն սակայն պայմանագրութիւն մը կնքուած ժամանակ, թէև անոնց գործադրութիւնը չափազանց դիւրին ըլլայ։ Մի՛ ըսէք թէ ձեր գործը չէ այս կարգի մանրամասնութեանց գիտակ ըլլալ, որովհետև երկար բարակ հմտութիւն չեն պահանջեր ասոնք և ամէնուն հասկացողութեան սահմանին մէջ են։ Մնաց որ նպարավաճառէն կամ մսավաճառէն բան մը գնած ատեններդ անգամ այս կարգի նրբութիւնները ձեռքէ չէք թողուր, ինչո՞ւ զանցառու գտնուիք միշտ ձեզի համար էական կարևորութիւն ունեցող գործի մը մէջ։

Մեք չենք ըսեր թէ խնդիր հանող Ընկերութիւններ կամ Գործակալներ չկան, ամէն տեղ ու ամէն բանի մէջ գէշն ալ կայ աղէկն ալ․ բայց ո՞վ կ'արգիլէ զձեզ ցորենը որոմէն զատելու և ա՛յնպիսի ընտրութիւն մ'ընելու որ յուսախաբութիւն չկրէք ապա։ Ասոնց ընտրութեան մը համար հեռուն երթալու կամ միայն յոգնեցնելու պէտք չկայ, աչքերնիդ չորս կողմ դարձուցէք ու պիտի գտնէք ձեր ուզածը․ Ժողովրդեան մեծամասնութիւնը կատարած է ինք արդէն այս ընտրութիւնը։ Մեք օրինակ ու անուն տալէ չենք ախորժիր, բայց հասարակութեան օգուտը՝ որ ամէն նկատումէ վեր է հրապարակագրի մը համար՝ պարտ կ'դնէ մեր վրայ մեր զգուշաւորութենէն չեղիլ և մասնաւորել Ընկերութիւն մը որ Պոլսոյ մէջ գործել սկսելէն ի վեր իր վճարմանց առատաձեռնութեամբն ու կանոնաւորութեամբն անուն հանած է և որ անհուն ժողովրդականութիւն ունի այսօր Թուրքիոյ ամէն կողմը՝ շնորհիւ մանաւանդ իր պատուական Տնօրէնին գործունէութեանն ու պարկեշտութեանն որ զօրութիւն ու ջանք չէ խնայած Թուրքիոյ հրապարակին վրայ առաջին տեղը տալու համար իր Ընկերութեան։ Անուն տալու պէտք չկայ կարծենք մատնանիշ ընելու համար «Իւնիօն» Ընկերութիւնն ու իր Արևելքի այնքան համակրելի Տնօրէնը Ազն. Սիմոն էֆէնտի Գայմէքլեան որ ընդհանուրին համբաւը կ'վայելէ այսօր մեր հրապարակին վրայ և որ մեր Ազգին ստուգիւ պատիւ կ'բերէ գտնուելով Ընկերութեան մը գլուխն որ Պոլսոյ մէջ գործող այս կարգի հաստատութեանց ամէնէն զօրեղն ու վստահելին է մեր կարծեօք։

Ահա՛ Ընկերութիւն մը որ խնդիր երբեք չէ ունեցած ժողովրդեան հետ և ունենալիք ալ չունի այսուհետև, ցորչափ այդքան ուղիղ ու պարկեշտ ձեռքերու մէջ է անոր Վարչութիւնը։ Հասարակութիւնն ալ՝ ինչպէս ըսինք՝ այս մասին մեր կարծիքէն է, որովհետև առաջին տեղը տուած է անոր՝ մեր հրապարակին վրայ, և գուրգուրանքի նմանող զգացում մ'ունի անոր նկատմամբ։

Երբ այս կարգի Ընկերութեան մը հետ է ժողովրդեան գործը, միջնորդի դժուարութիւնն ալ կ'թեթևնայ, վասն զի ա՛յն տեսակ մարդու երես չի տար անիկա և ընտրանօք կ'գործածէ իր պաշտօնէութիւնը։

Խնդիրն ընտրութեան վրայ է ուրեմն և պայմաններու խստութիւն կամ առաձգականութիւն կարևորութենէ զուրկ են պարկեշտ մարդոց համար, քանի որ իրենց դէմ չէ որ ուղղուած է անոնց խստութիւնը՝ այլ այն մարդոց դէմ որոնք չարաշահութեան առարկայ ընել կ'ուզեն ապահովագրութեան պէս հանրաշահ գործ մը։ Մնաց որ Կայսերական բարեխնամ Կառավարութիւնը զբաղած է արդէն այս խնդրով և հեռու չէ ժամանակն որ օրէնքի տակ պիտի առնէ ապահովագրական ընկերութեանց գործառնութիւնները՝ միօրինակ ու տիպար ձևի մը վերածելով, ի հարկէ անոնց պայմանագրերը, որով ժողովրդեան այս գանգատն ալ ինքնին պիտի վերնայ մէջտեղէն.

ԽՐԱՏԻՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱԼԻՕԼ.— Հրապարակին կացութիւնը բարւոքելու վրայ է։ Ծախնեցին 52 տակառ Ռուսիայէ։ Գինեքն են Օլատոֆքա 37 օխան և Թէրէքչէնքօ 38—39 օխան մէկ օսմ. ոսկիի։ Աւստրիոյ մէջ հրապարակը թոյլ է։

ՎԱՐԴԻ ԻՒՂ.— Պուլկարիոյ առևտրական Նախարարութեան գնահատութեան նայելով, այս տարի վարդի իւղին արտադրութիւնն առատ պիտի ըլլայ, բաւ որում վերջին օրերու մեղմ օդը կ'խոստանայ արտասովոր փթթում մը։

ԽԱՇՀՈՒԿ.— Մայիսի մէջ յանձնելի $42^1/_2$, Յուլիսին $43^3/_4$, Հոկտ.ին $44^1/_2$ ֆր.։ Շաքար, Մայիսին՝ 24.56, Յլ.—Սգստ. 24.75, Հոկտ. 27.75։ Բուրդ.— Յլ. 100 քիլօն 160 ֆր.։

ԱՆԳԼԻՈՅ ԴԱՆՔԱՅԻՆ շաբաթական հաշուեկշռէն կ'երևայ թէ մետաղադրամն աւելցած է 482,000, առևտրական թուղթերը աւելցած են 3,542,000, և պանքատոմսերու պահեստն աւելցած է 726,000, որով պահեստից համեմատութիւնն է 46.68 %։

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄ
ՎԼԱՏԻՎՈՍՏՈՔ

Բ.

Ռուս դիւանագիտութիւնը, այդ ատեն, արդարև ամէն ջանք ըրաւ Չինու Կառավարութիւնն իրեն շահելու համար։ Բայց քիչ ետքը, 1860ին, Անգլիոյ և Ֆրանսայի հետ Չինու Կայսրութեան միջև վէճ ծագեցաւ։ Չին այդ երկու Տէրութեանց դէմ գնել ուզելով հանդերձ, Ռուսիոյ ալ տեղի տալ չէր ուզեր։ Չին կ'ըսէր թէ Ամուրն իր երկրին մասը կ'կազմէ և Ռուսերը պէտք է որ ետ տան զայն իրեն, բայց երբ Անգլիա և Ֆրանսա 1860ին նուաճեցին Չինը, սա տեղի տուաւ նաև Ռուսիոյ։ 1860 Նոյմ. 14ին, Չին դաշնագիր մը կնքելով Ռուսիոյ հետ, Ամուրի հիւսիսային և Ուսուրիի արևելեան կողմի երկիրներն և մինչև Կորէայի սահմանագլուխն ամբողջ ծովեզերքը Ռուսիոյ թողուց, առանց կռուի և առանց փոխարինութեան։ Ռուսիա գրեթէ միևնոյն կերպով 1900ին Կափամարտիկներու շարժումէն ետքը գրաւեց Մանչուրիան, առարկելով թէ իր շինած չինական արևելեան երկաթուղին պաշտպանելու համար պէտք է որ զայն զինուորականապէս գրաւէ և այդ է այսօրուան պատերազմին գլխաւոր պատճառը։ 1860ի դաշնագրին անմիջական հետևանքն այն եղաւ որ Ամուր և Ուսուրի գետերուն, ինչպէս նաև ծովեզերեայ երկրաց վրայ կարգ մը զինուորական պահակներ հաստատուեցան զորս Ռուսերը «Բրիմօրսք» կ'կոչեն։ Քիչ ետքը նախ Անդրբայքալէն և Իրքուցքի երկրէն գաղթականութիւններ հաստատուեցան այդ ընդարձակ հողերուն վրայ, ապա Խազախի գունդեր կազմուեցան Ամուրի և Ուսուրիի վրայ։ Մինչև 1860, 40,000է աւելի գաղթականներ իրենց ընտանիքներով ու երկրագործական կազմածներով լաստերու միջոցաւ Շիլքա և Ամուր գաղթեցին։ Գիշերնին իրենց դուարը ցամաք կ'հանէին արածելու համար, և ցերեկը կ'շարունակէին իրենց ճամբան։ 1860էն ի վեր այդ գաղթականութիւն երթալով մեծցաւ և այսօր Ամուրի գաւառին բնակչաց թիւն է 120,303 և ծովեզերեայ գաւառին մէջ ալ 223,333 բնակիչ կ'հաշուուի, (առանց հաշուելու Սախալին կղզւոյն բնակիչներն որք 28,113 են թուով) և 1,854,353 քառ. քիլոմէթր ընդարձակութիւն ունեցող ընդարձակ երկրի մը համար մեծ բան մը չէ այս։ Վերոյիշեալ դաշնագրին կնքուելէն գրեթէ անմիջապէս ետքը, 1860ին հաստատուեցաւ առաջին և կարևոր պահակախումբը Վլատիվոստոք. քիչ ետքն հաստատուեցաւ Նիքոլայէվսք՝ Ամուրի վրայ, որ իր հարաւային նպաստաւոր դիրքին և անքննելի նաւահանգստին պատճառաւ Մ. Ասիոյ հիւսիս. արևելեան եզերաց վրայ նաւահանգստաւոր լաւ քաղաք մ'է թէև, բայց որովհետև նաւահանգստին սառոյցն երկար կ'տևէ, այսինքն մինչև Յունիս, մինչ Վլատիվոստոքի նաւահանգստին սառերը կ'հալին Մարտի մէջ, Վլատիվոստոքի նախապատուութիւն տրուելով, 1876ին պատերազմական նաւահանգիստը Նիքոլայէվսքէն փոխադրուեցաւ ի Վլատիվոստոք, որ իր առևտրական յառաջադէմ զարգացման պատճառաւ վերջապէս 1888ին ծովեզերեայ երկրին մայրաքաղաքն եղաւ։ Մեծն Պետրոսի ծովածոցը խորապէս ներս մտած է իր հարաւային ծայրին մէջ, և Մուրավիէվ կոչուած լեռնոտ թերակղզին ցամաքէն երկննալով անոր մէջ, երկու մասերու բաժնած է զայն, և արևելեան կողմէն կազմուած է Ուսուրի ծովախորշն և արևմտեան կողմէն ալ՝ Ամուր ծովախորշը, զորս իրարու կ'միացնէ կարճ ու նեղ նեղուց մը «արևելեան Վոսփոր» անուն, որ կ'բաժնէ Մուրավիէվ թերակղզին Քօզաքէվիչ կղզիէն։ Այս Վոսփորէն շրջանաձև ծովախորշ մը ներս կ'մտնէ Մուրավիէվ թերակղզւոյն հարաւային ծայրին մէջ և կ'կոչուի «Ոսկեղջիւր» որուն մէջ հաստատուած է Վլատիվոստոք։ Վլատիվոստոքի դիրքն ալ Բորդ Արթուրի թէ՛ առաւելութիւններն և թէ թերութիւններն ունի։ Ասոնց երկուքն ալ իրենց ծայրերը լեռնոտ հրուանդաններ ունին որ շատ երկնցած են ծովուն մէջ։ Շրջակայ բարձրութիւնները լաւ կ'ամրացուին և կ'պաշտպանեն երկու նաւահանգիստներուն մուտքը։ Միայն թէ երկուքն ալ սա թերութիւնն ունին որ թշնամին դիւրաւ կրնայ խզել ներքին երկրին հետ հաղորդակցութիւնն, զի երկաթուղին որ հաղորդակցութեան միակ գիծն է երկուքին համար, պաշտպանուած չէ և թերակղզւոյն արևմտեան ծովեզերքին շատ մօտ գտնուելով ենթակայ է թշնամւոյն թնդանօթներէն և ցամաք հանուած զօրքերէ քանդուելու ։ Այս թերութիւնը շատ զգալի է այժմ թէ՛ Վլատիվոստոքի և թէ Բորդ Արթուրի մէջ և այս է պատճառը շարունակ տարածուած այն զրոյցներուն թէ Ռուսերը պիտի թողուն Բորդ Արթուրը։ Վլատիվոստոք ըսելով կ'իմացուի ոչ միայն «Ոսկեղջիւր»ի մէջ (Ռուսերը Սոլոտոյի Ռօք կ'անուանեն զայդ) գտնուող նաւահանգիստը, որուն քով կառուցուած է քաղաքը, այլ և անոր մօտ գտնուող «Պօսֆոր Վօսդօչնիյ» (արևելեան նեղուց) կոչուած նեղուցն և Նովիք ծովախորշը։ Ոսկեղջիւրի ծոցը շրջանաձև է. ունի 5 վերստ երկայնութիւն, մէկ վերստ լայնութիւն և 9—23 մէտր խորութիւն։ Ամէն տեսակ հովերէ պաշտպանուած է կատարելապէս։ Վոսփորն ունի 9 վերստ երկայնութիւն, բայց իր լայնութիւնը փոփոխական է. արևմտեան ծայրի լայնութիւնն է 852 մէտր, և իր մէջ գտնուող փոքր ծոցերն ալ յատկական անուններ կը կրեն, Իւլիս, Աձաքս, Բարիս, Բաղրօքլուս և Տիօմեա։ Ոսկեղջիւրի մէջ մտնել չուզող նաւերուն համար լաւ տեղեր են ասոնք։ Վոսփորի արևելեան եզրը 3 վէրստ լայնութիւն ունի։ Իսքրիբէլէվ փոքր կղզին կ'պաշտպանէ զայն հարաւ. արևելեան հովերուն դէմ։ Թէ՛ Վոսփորի և թէ Ոսկեղջիւրի մէջ ծովն այնչափ խոր է որ մեծ նաւեր առանց արգելքի կրնան մտնել նոյն իսկ ափերուն։ Արսենալն ալ հոն շատ լաւ է։ Զինուորական նաւարանն երկու մասերու բաժնուած է, որոց մին քաղաքին արևմտեան ծայրը և երկու նաւաշինարան և զրահաւորաց համար ալ մէկ աւազան ունի։ Ծովախորշին արևելեան ծայրին մօտ երկու շարժուն աւազան կայ մեծ նաւերու համար։ Զրահաւորաց պարէնն առատօրէն կ'հայթայթուի, և հանքածուխն ալ կուգայ Սախալին կղզիէն։ Վլատիվոստոքի մէջ ճարտարական գործարաններու պակասութեանը պատճառաւ շատ դժուար է մեծ նաւերու նորոգութեան գործը։ Վլատիվոստոք քաղաքը շրջապատուած է համանողաձևական տարած մը կազմող բարձր լեռներով որք նաւահանգիստը կ'պաշտպանեն սաստիկ հովերէ։ 600է աւելի տուներ ունի, մեծ մասամբ փայտաշէն լայն ու ընդարձակ շէնքեր։ Քաղաքին շուրջն ալ հաճոյ ու փայլուն գունաւորութիւն մը չունի, բնութիւնը զրկած է զինքն այդ բանէն։ Երկու ռուսական ու մէկ աւետարանական եկեղեցի ունի. երկու կիմնազիոն, մին մանչ և միւսն աղջիկ աշակերտաց համար, նաւերու պատրաստելու դպրոց մը, արևելեան վանք մը, և առևտրական վարժարան մը։ Մտաւորական կեանքին համար, Վլատիվոստոքի ունեցածն է 3 լրագիր, մէկ թանգարան և հնախուզական ընկերութիւն մը որ Ամուր երկրին հնութիւններով կ'զբաղի։ Քաղաքին ճարտարական ճիւղերը կ'կազմեն խաղախորդութիւնը, ագօրապանութիւնը, աղիւսագործութիւնը, գարեջուրի պատրաստութիւնը, են։

ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ծայրագոյն Ասիոյ ծովային պատերազմին առաջին արարուածն աւարտեցաւ։ Բորդ Արթուրի ռուս նաւարամիղն այժմ նոր ոյժերու կ'սպասէ գործել կարենալու համար։ Մինչ Դք. օրուան ճակատամարտին վառօդի մուխին և մառախուղին վարագոյրը կ'վերնայ, պիտի սկսի Բ. արարուածը, այն է՝ Բորդ Արթուրի մօտ ճարոնական բանակին ցամաք ելլելն՝ եթէ յաջողի, և անուանի բերդաքաղաքին պաշարումը։ Հարիւր, և ուրիշ լուրի մը նայելով եօթանասուն փոխադրանաւեր, 26 մարտանաւերէ պաշտպանուած, Լիաօդօնկի ծոցին հիւսիսային արևելեան եզերքին մօտ կ'յածին այժմ, իրենց մէջ կրելով զօրքեր, թնդանօթներ, ձիեր և ռազմամթերք, ցամաք հանելու համար ծովախորշին մ'ը ու և է կէտին վրայ, զոր ո՛չ ոք գիտէ դեռ։ Հաւանական է որ զօրավար Օքուի հրամանատարութեան տակ գտնուող ճարոնական Բ. բանակն է այդ որ այժմ Լիաօդօնկի ծոցը ղրկուեցաւ։ Ինչպէս յայտնի է, այդ բանակը Մարտ 10ին նախ Չինամբօ, ապա Եօնկանբօ (Եալուի գետաբերանը) ղրկուեցաւ։ Բայց որովհետև այդ Բ. բանակին Եալուի գետաբերանն հանուելուն լուրը չհաստատուեցաւ դեռ, կարելի է ընդունիլ թէ Եօնկանբօ՝ Ճարոնէ Լիաօդօնկի ծոցն ղրկուող այդ զօրաց երկրորդ հանգրուանն էր, ինչպէս Չինամբօ եղած էր առաջին հանգրուանը։ Ճարոնական երկրու զօրաբաժին, ընդ ամէնն 33,000 հոգի, 8000 ձի, 108 թնդանօթ, այլ և այլն, և մէկ ամսուան համար 7000 թոնօ պարէնի փոխադրութեան համար 200,000 թոնօ տարողութիւն ունեցող փոխադրանաւեր պէտք են։ Նիբօն—Եուզէն—Քայշա Քէբիշա նաւային ընկերութիւնը պատերազմի ատեն ճարոնական կառավարութեան տրամադրութեան տակ դրած է իր 70 նաւերը, որք 2000էն մինչև 6000ական թոնօ տարողութիւն ունին և կրնան մէկ անգամէն փոխադրել երկու զօրաբաժին։ Հետևապէս, Բ. բանակին 3րդ և ապա 4րդ զօրաբաժինները փոխադրանաւերու երկրորդ տորմիղի մը պիտի սպասեն ճամբայ ելնելու համար։

Վերոյիշեալ զօրաբարձ փոխադրանաւերուն ո՛ւր երթալն յայտնի չէ դեռ։ Մէկ քանի շաբաթ առաջ ըսուեցաւ թէ Ճարոնցիք զօրք պիտի հանեն Ինքուի մէջ որ Լիաօ գետաբերնին վրայ Նիուչուանկի նաւահանգիստն է։ Բայց Լիաօ գետաբերնին մէջ ցամաք զօրք հանելը թէ բնական և թէ արուեստական պատճառներու համար շատ դժուար է։ Այդ գետին մէջ ուղղակի մուտքն արգիլուած է ծանծաղուտ մը, ուրկէ զգուշանալու համար պէտք է դէպի հիւսիս արևելք շեղելով անցնիլ։ Այդ անցքին մէջ ուրկէ 2—4 մէտր խորութիւն ունեցող միջին նաւեր միայն կրնան օգտուիլ, Ռուսերն ականներ դրած են և խոշոր թնդանօթներ ալ կ'իշխեն անոր մուտքը։ Բայց որովհետև մեծ զրահաւորներն ու յածանաւերը, որոց միջին խորութիւնը, ջուրէն վար, 5—8 մէտր է, ջուրի ցածութեան և ծանծաղուտին պատճառաւ հազիւ կրնան 25—30 քիլոմէթր հեռու մօտենալ ռուսական ամրութեանց, և հետևապէս, Ճարոնցիներուն զօրահանութիւնն արգիլող այդ ամրութիւններն անպարաղութեամբ մնալ շատ դժուար է։ Այս դժուարութեանց պատճառաւ ճարոնցի զօրաց ցամաք հանելուն իբր նորագոյն տեղին որոշուած է կ'ըսուի Քաբէբէկ, որ Նիուչուանկէ 40 քիլոմէթր դէպ հարաւ հեռու վայր մ'է։ Աւելի դիւրին է զօրք ցամաք հանել հոն, քան ի Նիուչուանկ։ Վերջապէս, կ'ըսուի նաև թէ հաւանական է որ յիշեալ փոխադրանաւերը Քինչու երթան։ Քինչուի խորշը Սօսիեռայ ծովածոցին մէջ է, Բորդ Արթուրէ 50 քիլօմէթր հեռի դէպ ի հիւսիս. արևելք։ Տալնիի ծոցին և իր մէջ պարունակ մը կայ 5 քիլոմէթր լայնութեամբ։ Քինչու խորշին մէջ զրահաւորներն ու յածանաւերը կրնան մինչև 5—6 քիլոմէթր մօտենալ ծովեզերքին և իրենց խոշոր թնդանօթներով պաշտպանել զօրահանութիւնը։ Սակայն Ռուսերը թէ Քինչուի, թէ Տալնիի մէջ զօրաւոր ամրութիւններ շինած են որք հաղորդակցութեան մէջ են Բորդ Արթուրի հետ։ Եթէ Ճարոնցիք յաջողին զօրք հանել ցամաք, որ շատ դժուարին եղած է, ի Քինչու և յառաջանալ Քվանդունկ թերակղզւոյն մէջ, շահաւոր պիտի ըլլայ իրենց։ Պիտի կրնան խզել Բորդ Արթուրի և Նիուչուանկի միջև երկաթուղին, հեռագրի և ճամբու հաղորդակցութիւններն և պաշարել բերդաքաղաքը։ Հինգ քիլոմէթր երկայն այդ տեղւոյն մէջ իրենց երկու թևերը ճարոնական զրահաւորներուն թնդանօթներուն պաշտպանութեան տակ առած՝ պիտի կրնան պաշտպանողական դիրք գրաւել, Բորդ Արթուրէ և Նիուչուանկէ իրենց սպառնացող Քուրոբադքինի բանակին յարձակողական գործողութեանց դէմ։ Բայց Բորդ Արթուրի մէջ գտնուող ոյժերը բերդերուն պաշտպանութեամբ միայն զբաղած են և չեն կրնար ուրիշ գործողութեան ձեռնարկել և զօրավար Քուրոբադքին ալ այժմ Լիաօ գետին ստորին մասերուն մէջ իր դիրքերն ամրացնելով կ'զբաղի և իր ուշադրութիւնը դարձուցած է աւելի Եալուի կողմը։ Հետևապէս, եթէ Ճարոնցիք կարենան յաջողիլ Քինչուի և Տալնիի միջև գտնուած պարանոցը ձեռք անցնել, պիտի կրնան Բիցէվոյի և Տալնիի մէջ զօրք հանել և այն ատեն է որ պիտի սկսի Խաղաղականի պատերազմին Գ. արարուածը։

(Նոյէ Ֆրայէ Բրէսէ, Ապրիլ 19.)

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Թանի Բեդերսպուրկի Թղթակիցն հեռագրելը կ'գրէ Ապրիլ 14 թուով.—«Ցամաքի վրայ տեղի ունեցած գործողութիւնք թոյլ տուին որ Ճարոնցիք իրենց բանակը վարեն մինչև Եալուի ձախ եզերքը։ Ամբողջ բանակ մը իր բոլոր կազմածներով Ուիճուի մօտ կեդրոնացնել շատ դժուար է, զի ճամբաները շատ գէշ են, և ասոր համար է որ դեռ կարելի չեղաւ գետէն անցնիլ։ Ռուս սպայակոյտը կասկած կ'յայտնէ նոյն իսկ թէ Ճարոնցիք Եալուէն պիտի անցնի՞ն թէ ոչ, և արդեօք զօրեղագոյն ամրանալով ի Քորէա չպիտի՞ սպասեն որ Ռուսք գան զիրենք դուրս հանել ուզեն անկէ։ Նիբօնները դիրք բոլորովին պիտի փոխուի այս կերպով, և փոխանակ յարձակողական ընթացք բռնելու, խոհեմ պաշտպանողական ընթացք մը բռնելով պիտի բաւականանան։ Ռուսերուն շատ հեշտ չի գար այն գաղափարը թէ պիտի ստիպուին քայլ առ քայլ դուրս հանել Ճարոնցիներն այնպիսի դիրքէ մը որ լի է խրճիթ-ամրութիւններով և լեռներով։ Միւս կողմէ Ռուսերուն համար շատ կարևորութիւն չունի Քորէան, զոր տրամադիր էին արդէն ձգելու Ճարոնի, առանց պատերազմելու։ Եւ թերևս պիտի գոհանային իրենց մանչուրիական եզերքէն դիտելով ճարոնական զինուորներն որ կ'կռուին քիչ փառաւոր և զայրացուցիչ գրաւումի մը դժուարութեանց հետ։ Այս արդիւնքը կրնայ շատ երկարիլ, բայց վերջ ի վերջոյ լուծում մը պիտի տրուի այս խնդրոյն. զի Ճարոնցիք պիտի հասկնան որ Ռուսք ջախջախիչ առաւելութիւն կ'ունենան իրենց վրայ, որով գուցէ իրենք անփառունակ պարտութիւն մը կրեն։ Ուստի, կարելի է ըսել թէ Ճարոնցիք օգուտ պիտի քաղեն իրենց թիւին առաւելութենէն և պիտի փորձեն Եալուի միւս եզերքն անցնիլ։ Ճարոնցիք հիմա Եալուի մօտ 80,000 հոգի ունին, որոց պիտի օժանդակեն թնդանօթակիրներ իրենց հրետանիով. իսկ Ռուսաց թիւն է 35—40,000, Միշչենքոյի Խազախներն ալ հետ առնելով։ Զօրավար Քուրոբադքին չուզեր առ այժմ վճռական ճակատամարտ մղել, և եթէ Ճարոնցիք յաջողութիւն ունենան այս կողմէն, Զօր. Քուրոբադքին շատ սուղ վճարել պիտի տայ իրենց այդ յաջողութիւնը, զի Ճարոնցիք աւելի ևս մօտեցած պիտի ըլլան ռուս ընդհ. հրամանատարին գործողութեանց խարիսխին և հաղորդակցութեան գիծերուն։ Ճարոնական երկրորդ զօրաբանակին պատերազմական թատրը մտնելը ցոյց կուտայ թէ մօտերս պիտի փորձեն Եալուէն անցնիլ։ Այս երկրորդ զօրաբանակին գործն ի՞նչ պիտի ըլլայ։ Պիտի օգնէ որ Ա. զօրաբանակին Եալուէն անցնի՞, թէ ինք Եալուէն անցնելու այդ փորձէն օգուտ քաղելով, Մանչուրիա պիտի ելնէ ուղղակի։ Արդեօք Քորէայի հիւսիսակո՞ղմը պիտի ելնէ, կամ թէ առաջին բանակին տե՞ղը պիտի գրաւէ։ Ասոնք այնպիսի խնդիրներ են, զորս կարելի չէ շուտով լուծել, զի առ այս հարկ եղած միջոցները չունինք ձեռքերնիս։ Ռուս սպայակոյտը կ'պատրաստուի բոլոր այս փորձերուն դիմադրելու, և կարելի կը նկատէ որ նոր փորձ մ'ըլլայ Բորդ Արթուրի դէմ, միևնոյն ատեն որ փորձ կատարուի Եալուէն անցնելու, նո՛յն իսկ փորձեր կատարուին յարձակման Նիուչուանկի դէմ, ուր զրահաւոր մը և երկու յածանաւ կարող են քայքայել ամրութիւնները, այսպէս զբաղեցնելով Ռուսերը, մինչ ուրիշ տեղ շատ աւելի կարևոր գործողութիւններ պիտի կատարեն։ Զօրավար Քուրոբադքին, որ խելացի ռազմագէտ մ'է, հեռատես և խոհեմ մարդ, միանգամայն, արդէն հարկ եղած միջոցները ձեռք առաւ դիմադրելու համար այն փորձերուն, որոց մէկն ընտրելու մասին վարանքի մէջ են Ճարոնցիք։ Եթէ Ճարոնցիք յաջողին նո՛յն իսկ Եալուէն անցնիլ, կասկածելի է որ կարենան Մուգտէնի և Լիաօեանկի վրայ քալել, ինչպէս մտադիր էին պատերազմին սկիզբը, եթէ իրենց առաջին ձեռնարկներն յաջողէին։ Ճարոնական երկու զօրաբանակները— երրորդն հասած չէ դեռ իր տեղը— փոխանակ Մանչուրիա յառաջ խաղալու և թշնամի երկրին մէջ մտնելու, պիտի տարածուին Եալուէ դէպ ի Լիաօեանկ և Բորդ Արթուր. Քորէայի ծոցը շրջապատող ճամբուն վրայ, մարտանաւերու պաշտպանութեան տակ մնալով։ Այս կարծիքը կ'հաստատուի ճարոնական բանակին ստացուած նորագոյն տեղեկութիւններով։ Լիաօեանկի և Մուգտէնի վրայ քալել Ճարոնցւոց գործը չէ, թէև եւրոպական բանակ մը նոյն բանը պիտի ընէր, զի Ճարոնցիներուն համար այդ յառաջխաղացութիւնն անյաղթելի դժուարութիւններ պիտի ներկայացնէր։ Ճարոնական բանակին մէկ յայտնի թերութիւնն է բաւական թուով սպայ և ենթասպայ չունենալը, որով առատօրէն չի կրնար կատարուիլ զօրաց յառաջխաղացութիւնը։ Կ'ստիպուին անձկացնել իրենց ձեռնարկները, զի արդիւնաւորապէս մարզուած պետերուն թիւը սահմանափակ է։ Մուգտէնի վրայ քալելու համար զինուորական բարձր կարգի տաղանդ պէտք է։ Պատերազմին սկիզբէն ի վեր երևան եկած թերութիւնք թոյլ չեն տար կատարելու այս յառաջխաղացութիւնը, որուն պիտի ձեռնարկէր բնականաբար այն որ պիտի ուզէր փայլուն յաղթանակով մը վերջացնել պատերազմը։»

ՊԱԼԹԻԿԻ ՆԱՒԱՏՈՐՄԸ.—Բեդերսպուրկէ կ'հեռագրուի Ապրիլ 17 թուով, Ռուսական Գործակալութեան կողմէ.— «Պալթիկեան նաւատորմը ժամ առաջ Մ. Ասիական ջուրերը ղրկելու համար ամէն ամէն ջանք ի գործ կ'դրուի։ Բայց պաշտօնական շրջանակի մէջ անկարելի կը համարուի որ նաւատորմն առաջիկայ ամսոյ վերջէն առաջ Քրօնշդատէն մեկնիլ կարենայ։»

ԲՈՐԴ ԱՐԹՈՒՐ 1894ԻՆ ԵՒ 1904ԻՆ.—Ծովակալ Ինկլէզ գրեց պատմութիւնը Բորդ Արթուրի գրաւման 1894ին Ճարոնցիներու կողմէ, չինական բանակին ու նաւատորմին պարտութենէն ետքը։ Վերջին տեսարանը, կ'ըսէ ծովակալ—քրոնիկագիրը, շատ հետաքրքրաշարժ էր։ Ճարոնական բանակը, վերջին յարձակումն ընելու համար, Քինչուէն յառաջխաղացած էր, ընդ հրամանատարութեամբ Մարէշալ Կոմս Օեամայի։ Յաղթական մուտքէն ետքը, սպայք ուզեցին մէկտեղ հաց ուտել, իրարու խնդակցելու առիթ ունենալու համար։ Բայց նոր գրաւուած և շփոթութեան մատնուած բերդաքաղաքի մը մէջ, բանակին բուն խարիսխէն 600 մղոն հեռի տեղ մը, միթէ կարելի՞ էր վայելուչ հացկերոյթ մը սարքել, նոյն իսկ մեծ յաղթութիւն մը տօնելու համար։ Ուստի, եղածովը շատացան։ Սեղաններ, աթոռներ, ամաններ, քով քովի բերելով, երկար սեղաններ սարքեցին, ու վրան բերին զետեղեցին ինչ որ իւրաքանչիւր սպայ ունէր իր գօտիին կամ ջուխտին բեռներուն մէջ, այլ և այլ պաղ միսեր, թիթեղի կամ պտուկի մէջ պահուած, չոր ձուկեր, պաքսիմատներ կամ պիսքիւիներ, ինչ որ կար, և բազում սամշու, չինական բրինձի գինի։ Սպայք խառն ի խուռն շարուեցան այս սեղաններուն առջև, իրարու ձեռքը թօթուեցին, զիրար շնորհաւորեցին, և Պանզա՛յ աղաղակներով ու համախումբ զինուորական նուագածութիւնով թնդացուցին մօտակայ բլուրներն և անոնցմէ անդին տարածուող հովիտները։ Նախ և առաջ, որպէս իրենց սովորութիւնն է, Միքատոյին անունը փառաւորեցին, և հազարաւոր կոկորդներէ բխեցաւ «Նիփօ՛ն պանզա՛յ» աղաղակը կայսեր համար։ Յետոյ բազմաթիւ սպայք խմբովին առաջ եկան նորէն, և յաղթական Մարէշալն իրենց ուսերուն վրայ քաշելով հանելով, սեղաններուն շուրջը պտըտցուցին՝ կեցցէներու ցնծագին աղաղակներուն մէջ։ Մարէշալն իր տեղը բերին դրին, և ապա անոր երկրորդը, յետոյ սպայակոյտի պետը, անկէ ետքն ալ ուրիշ ժողովրդական սպաներ բազուկներնուն վրայ և ուսերնուն վրայ պտըտցուցին։ Այսպէս ահա տօնեցին Ճարոնցիք իրենց մեծ յաղթութիւնը, զոր մի քանի ամիս ետքը, Ռուսիոյ պահանջման համակերպելով, պիտի չքացնէին Գերմանիա և Ֆրանսա։ Ռուսիա պնդեց թէ քանի որ Ճարոն յաջողեցաւ Քորէայի անկախութիւնն հաստատել նուիրագործել, և քանի որ Չինու Կայսրութիւնն ա՛լ ձեռք քաշեց Քորէայէն, պէտք է որ յարգուի Չինու երկրային ամբողջութիւնը, և Բորդ Արթուր վերադարձուի Չինու, որպէս զի Ճարոնցիք մշտակայ վտանգ մը չըլլա՛ն Բէքինի համար։ Ահա՛ այս մեծ զրկանքն է զոր Ճարոնցիք չէին կրցած մարսել անկէ ի վեր, երբ շատ չանցած տեսան որ Բորդ Արթուր Ռուսիոյ ձեռքն անցաւ առանց կռիւի։

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ

ՑՈՒՐՆԻԷ

ԼՈՆՏՈՆ, Ապրիլ 21.—Թօքիօյէ հեռագիր մը կ'ըսէ թէ ճարոնական զօրաբանակ մը ցամաք ելած է Նիուչուանկի մօտ։

ՓԱՐԻԶ.—Բեդերսպուրկէ կ'հեռագրուի թէ Մ. Արևելքի ռուս զօրքերուն թիւը 300,000ի հասած է հիմա։ Այսչափին առ այժմ բաւական համարուելով, նոր զօրք ղրկուիլը դադրեցաւ։

—Իրավեկ աղբիւրէ կ'հաստատուի ծովակալ Ալեքսէյէվի Մ. Արևելքի փոխարքայութենէ հրաժարման լուրը, և կ'ըսուի թէ հրաժարականը պիտի ընդունուի։

ԲԵՐԼԻՆ.—Բրէզլաուի մեծ զինարան մը փամփուշտի մեծաքանակ յանձնարարութիւն մը կ'լրացնէ, զոր ըրած է Չինաստան։ Արդէն 15 միլիոն փամփուշտ յանձնուած է։

ՎԻԵՆՆԱ.—60,000 ճարոնական զօրքեր գրաւած են Քորէան։ Երկրորդ զօրաբանակը դեռ ցամաք չէ հանուած։

ՀԵԼԼԵՆ Կառավարութիւնն իմանալով որ Պոլսոյ մէջ 200,000 բազմահարուածեան հրացան ի վաճառ հանուած են, ուզած է առիթէն օգուտ քաղել և գնել զանոնք։ Թնդանօթաձիգ զօրաց հարիւրապետ Խարալամփի, որ Ֆրանսա կ'գտնուէր րիվոլվէրներ գնելու համար, Պոլիս գալ երթալու հրաման ստացաւ։

—Յունաստանի Կարմիր Խաչի Ընկերութիւնն Օլկա թագուհիին յանձնեց 17 հազար տրախմիի գումար մը Ռուս վիրաւորներուն համար։ Ն. Վեհափառութիւնը նոյն գումարով ճերմակեղէն պիտի գնէ ռուս բանակին վիրաւորներուն համար։

ԱՖՂԱՆՍՏԱՆԻ Էմիրը, Հնդկաստանի Փոխարքայ Լորտ Քըրզընէ խնդրեր է բժիշկ մը ղրկել իրեն, դարմանելու համար ա՛յն վէրքը զոր ստացեր է հրացան մը գործածելու ատեն։ Փոխարքան պատասխաներ է թէ իր մասնաւոր բժիշկը, Տոքթ. Պըրտը պիտի ղրկէ։

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԸ, Վիեննայի Թերթի մը խօսքին նայելով, այս տարի ևս Եւրոպա պիտի ճամբորդէ։ Ֆրանց—Յոզէֆ Կայսրը ամռան Իշլի մէջ պիտի ընդունի Մուզաֆֆէրէտտին Շահին այցելութիւնը, որ տասն օր պիտի մնայ նոյն քաղաքին մէջ։

ՁԱՆԱԶԱՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՀՈՏԵՐԸ.—Անգլիացի Թղթակից մը գրեր է որ Եւրոպայի գլխաւոր քաղաքներն իրենց համար մասնաւոր հոտ մ'ունին։ Բարիզ թեթևապէս տաքցուած է փայտածուխի հոտով։ Լոնտոն ալ ծխանի մուր կ'հոտի։ Քալէ և Մարսէյլ՝ սխտոր կ'բուրեն։ Մոսքուա ռէնէթ խնձորի բարկ սեւակը կ'հոտի, և Բեդերսպուրկ մանող մը խոնաւ տեղ մնացած հին կօշիկներու հոտ մը առնել կ'կարծէ։— Բերա՞ ի՞նչ կ'հոտի արդեօք, չըսեր Թղթակիցը։ Բայց, մանաւանդ առտուն կանուխ, կամ կէս գիշերէն սկսեալ մինչև առաւօտ, ապահովապէս վարդ, կամ մանուշակ, կամ foin coupé չի բուրեր Բերա։

ԲԱՐԻ ՀԵՂԻՆԱԿ ՄԸ

ՄԱՀ "ԻՆՔՆՕԳՆՈՒԹԵԱՆ,, ՀԵՂԻՆԱԿԻՆ

Վերջին Թղթաբերով առնուած անգլ. թերթերը ծանուցին Սամուէլ Սմայլի մահը։ Ո՞ր Հայը չի յիշեր Ինքնօգնութեան անուն պատուական գրքին հեղինակը։ Անգլիացիներու ամբողջ երկու սերունդներ խրատուեցան իր շինիչ պատմութիւններովը, զորոնք հաւաքեց այս գրքին մէջ (Self Help), նկարագրելով կեանքը բոլոր այն ծանօթ Անգլիացիներու և օտարներու որք ոչինչէն յառաջ եկած, աննպաստ պայմաններու դիմագրաւելով, և ձախողուածներէ չընկճելով, մարդ եղած են, և ընկերութեան մէջ դիրք մը բռնած, ու իրենց նմաններուն օգտակար եղած։ Օրուան վիճաբանութեան մը ակնարկելու համար, կրնանք յիշել թէ Սամուէլ Սմայլզի Ինքնօգնութեան դիւցազուններուն մէջ կային այնպիսիք որք թաղին նպաստը կ'ընդունէին, բայց յետոյ իրենք իսկ հասան մեծամեծ բարերարութիւններ ընելու՝ յօգուտ կարօտ և չքաւոր Մանկութեան։ Անոնց մէջ կային որ խեղճ, անուս, անօգնական, արհեստի աշկերտութեան մտած, կամ գործաւորութեան յետին աստիճանին մէջ ոչինչ օրապահիկ մը շահիլ աշխատեցան, բայց ինքնօգնութեամբ բան սորվեցան, զարգացան, և օր մը իրենք տէր եղան այն գործարանին ուր աշկերտ մտեր էին, կամ խոշոր դրամատէր մը եղան, և հազարաւորներու գործ տուին։ Ի մի բան, ինչ որ Քարնէկի վերջերս ամփոփեց գրեց իբրև իր յաջող կեանքին փորձառութիւնը, նոյնը գրեթէ կէս դար յառաջ Սամուէլ Սմայլզ գրած էր իբրև խմբագիր իր դիտողութեանց և ծանօթութեանց արդիւնքը, և իբրև ժողովրդական հեղինակ, մեծ համբաւ ունեցաւ իր ժամանակին մէջ։ 1812ին ծնած էր Սկովտիոյ արևելեան Լօթիըն գաւառին մէջ, ի Հատինկթըն։ Եդինպուրկի Համալսարանէն վկայուած ելաւ։ Բայց քիչ շատ ամէն գործ ըրաւ։ Իր գլխաւոր պաշտօնն եղաւ Լիտս Թայմզի խմբագրութիւնը, յետոյ տնօրէնութիւնը նոյն Թերթին։ Եւրոպեան ամէն լեզուի (ինչպէս և հայերէնի) թարգմանուեցաւ իր գլխաւոր երկը, և այնքան հաւնուեցաւ Անգլիայէն դուրս ալ որ՝ զանազան Կառավարութիւններ պատուանշաններ ղրկեցին իրեն։ Շատոնց քաշուած էր գործէ, բայց իբրև քաջողջ և զգաստ կեանքի մը պարգև, իր 92րդ տարիին մէջ դեռ պահած էր իր մտային պայծառութիւնն ու առողջութիւնը։

Եթէ Հայ տպագրիչ մը նոր և աւելի յաջող մէկ թարգմանութիւնն ընել տար Ինքնօգնութեան՝ վերջին տպագրութեանց վրայէն, և Քարնէկիի ճառերովը և ուրիշ գրուածներովը որք մասամբ թարգմանուեցան արդէն Բիւզանդիոնի մէջ՝ միակ հատոր մը կազմէր, ընթերցասիրութեան համար լաւագոյն գործ մը հայթայթած կ'ըլլար նաև մեր արդի սերունդին։

ԱՆՈՒԱՆԻ ՍԵՒԱՄՈՐԹ ՄԸ

Նիւ Եորքէ հեռագիր մը ծանոյց Մր. Ուօրըն Քօլիճէնի մահն ի Քօնքօրտ։ Ասիկա Մ. Նահանգաց ամէնէն նշանաւոր սևամորթ գործիչներէն մէկն էր։ Ծնաւ իբրև աղքատիկ գիւղի մը զաւակը, բայց այնքան աշխատեցաւ, և այնքան մեծ ընդունակութիւններ ցոյց տուաւ որ երբ մեռաւ՝ Մ. Նահանգաց ամէնէն յաջող և հարուստ սևերէն մէկն էր։ Շատ պայծառ միտք մ'ունէր, և շատ մաքուր հոգի մը։ Երբ ի Ուաշինկթըն Հօուարտի Համալսարանին մէջ կ'ուսանէր, ծառայութիւններով և զանազան աշխատութիւններով ինք կը հանէր իր օրապահիկն ու դպրոցական ծախքերը։ Յետոյ գործի ասպարէզը մտաւ, և խնայած դրամը պահեցուց անշարժ կալուածի։ Գիտցաւ թէ ո՛ր գետինները թանկ պիտի ըլլային ապագային, և ժամանակին զանոնք աժան գնեց, յետոյ կալուածներ շինեց։ Այսինքն՝ ինչ որ ձևով որ Աստօրները Նիւ Եորքի մէջ հարստացեր էին մէկ—երկու սերունդ առաջ, ինք նոյն ձևով Հարաւային Նահանգաց մէջ հարստացաւ։ Բայց իր հարստութիւնն իրեն միայն չպահեց։ Իր մեծութիւնն հոն էր որ իր սևամորթ ցեղակիցներուն նիւթական ու բարոյական խեղճ վիճակը տեսնելով, աշխատեցաւ անկէ, միտքը դրաւ վերականգնել իր ցեղը, կրթութիւն և ապրուստի միջոց տալով անոր։ Դպրոցներ ու գործանոցներ հիմնեց յատկապէս սևերուն համար։ Ինքն էր որ հաստատեց բամբակի առաջին մանարանը սևերուն համար, ուր բոլոր աշխատաւորները սևեր էին, և յետոյ մանարանին բոլոր բաժնետէրներն ալ սևերն եղան։ Քօնքօրտ քաղաքին մէջ գեղեցիկ քարուկիր

եկեղեցի մը շինեց, և սեւ համայնքին նուիրեց։ Ինքն եղաւ նախաձեռնարկ և բարերար «Սեւերու արուեստագիտութեան տարեկան տօնավաճառին» որ 25 տարիէ ի վեր ամէն տարի տեղի կ'ունենայ Րէլէ քաղաքին մէջ, ու մինչպէս սատարեց արհեստի վարժեցնելու իր ցեղակիցները, որք մինչեւ այն ատեն միայն բանուորութեամբ միայն կ'ապրէին, և ուրիշ գործ չէին գիտեր գրեթէ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Տրվանիչէի կառավարիչ անուանուեցաւ Ամարայի նախկին կառավարիչ Համտի փաշա։

—Միւթէմայիզլի աստիճան տրուեցաւ ծովային պաշտօնատան աստեղէններու հայթայթիչ վաճառական Միչօն էֆ.ի։

—Դ. Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Իսքէչէի Ցոյն Մետրապոլտի փոխանորդ Տ. Խրիսթոֆուլոս Եօաքիմի։

Արուեստից չքագրամ տրուեցաւ ոսկերիչ վարպետ Արշակի և տփագործ Աթանասի։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.— Աւստրեան դեսպան Պառոն տը Բալիչէ երէկ Բ. Դուռն երթալով, տեսակցեցաւ Բարձր. Մեծ—Եպարքոսին և Արտաքին գործոց նախարարին հետ։

—Հելլէն դեսպան Մ. Կրիպարիս և Հանրային Պարտուց Վարչական Խորհուրդին նախագահ Բօմպոսեան Պէանժ եւս երէկ տեսակցեցան Բարձր. Մեծ—Եպարքոսին հետ։

—Պուլկարայ Էկզարք Տ. Եօսիֆ երէկ տեսակցեցաւ Բարձր. Մեծ—Եպարքոսին հետ։

—Հայ—Կաթոլիկանց Պատր. Փոխանորդ Տ. Աւետիս Արք. Արփիարեան երէկ տեսակցութիւն մ'ունեցաւ Ներքին գործոց նախարար Բարձր. Մէմտուհ փաշայի հետ։

—Ռէժիի ընդհ. Տնօրէն Մ. Ռանպէռ երէկ տեսակցութիւն մ'ունեցաւ Դատական Բարձր. նախարարին հետ։

ՌՈՒՄԵԼԻՒ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ.— Մարտ 15էն ի վեր, Ռազլըքի, Նէվրէքոբի, Ճումայի—Պալայի, Տէմիրհիսարի, Օսմանիյէի և Տրամայի մէջ 166 Պուլկար փախստականներ անձնատուր եղած են կայսերական գթութեան ապաւինելով։

—Սելանիկէ Ապրիլ 18 թուով կ'գրեն թէ անցեալ Ուր. օր Լիբա գիւղին (Թիքվէշ) շրջակայքը, զինուորական ջոկատ մը ընդհարում մ'ունեցած է պուլկար աւազակախումբի մը հետ որ 20 հոգիէ կ'բաղկանար։ Աւազակներէն 4ը սպաննուեր, իսկ միւսներն ի փախուստ դարձեր են։

—Աթէնքէ կ'գրեն թէ հելլէն կառավարութիւնը Թեսալիոյ սահմանագլխին վրայ զինուորական միջոցներ ձեռք կ'առնէ չարագործներուն անցուդարձն արգիլելու համար։ Սահմանագլխին վրայ շրջուն պահակախումբերն աւելցած են։

—Սելանիկի նահանգին ոստիկան—զինուորներու գունդը չորս վաշտէ պիտի բաղկանայ։ Վաշտերէն երկուքը, մին հեծեալ և միւսն հետեւակ, Սելանիկ քաղաքին (Սանճագ) և միւս երկուքն ալ Սէրէզի և Տրամայի կ'վերաբերին։ Սելանիկի ոստիկան—զինուորներու հետեւակ վաշտը 15 գումարտակէ (պէօլիւք), այն է 1238 հոգիէ կ'բաղկանայ, որոց 984ը զինուոր և մնացեալը սպայ և ենթասպայ, զանազան աստիճանաւ։ Այս 15 գումարտակներէն 3ը Սելանիկի մէջ պիտի գտնուին, իսկ 12ը Գաթէրինի, Գարաֆէրիէի, Վոտինայի, Ենիճէի, Կէվկէլիի, Թիքվէշի, Ստրումճայի, Թօյրանի, Ավրաթ—Հիսարի, Լանգազայի, Բէօջնիկրէի և Թասոս կղզին մէջ պիտի գտնուին։ Սելանիկի հեծեալ ոստիկան—զինուորներու վաշտն ալ 230 հոգիէ պիտի բաղկանայ։ Սէրէզի և Տրամայի ոստիկան—զինուորներու վաշտերն ալ ի միասին հաշուելով, Սելանիկ նահանգին ոստիկան զինուորներու գունդը 2268 հոգիէ պիտի բաղկանայ, որոց 383ը հեծեալ և 1885ը հետեւակ։

ՕՍՄ. ՆԱՒԱՏՈՐՄԸ.— Մէճիտիյէ յածանաւը, որուն Միթիլլի ժամանումը ծանուցինք, 100 մէտր երկայնութիւն, 12 մէտր լայնութիւն, և ջուրէն վեր 4 ու կէս մէտր բարձրութիւն, 3277 թօնօ տարողութիւն, երեք ծխնելոյզ, երկու կայմ և երկու պտուտակ ունի։ Իր մեքենաները 12,000 ձիու ոյժ ունին, որք ժամը 22 ծովային մղոն սրընթացութիւն կուտան։ Իր կաթսաները ֆրանսական «Նիքլօզ» դրութեամբ 16 հատ են։ Աձուխի մթերանոցները կրնան 600 թօնօ աձուխ պարունակել։ Զինուած է մեծ ու փոքր 22 արագահարուած թնդանօթներով և 2 թորփիլարձակ խողովակներով։ Ելեկտրական հզօր ցոլացուցիչներ ունի։ Իր սպաներուն ու նաւաստիներուն թիւն է ընդամէնն 302 հոգի։

—Համիտիյէ յածանաւը, որ ի մօտոյ Օսմ. Նաւատորմին պիտի միանայ, Մէճիտիյէ յածանաւէն մեծութիւնն ու ձեւն ունի, միայն թէ իր սրընթացութիւնն 2 ծովային մղոն աւելի է, և իր թնդանօթներն ալ Արմսդրոնկի վերջին արուահնարուած դրութեամբ են։

—Կայսերական Էրթօղրուլ զբօսանաւը, որ Անգլ. Արմսդրոնկ նաւարանին մէջ կը շինուէր, բոլորովին աւարտած ըլլալով, նախընթաց օր սրընթացութեան փորձեր կատարեր է։ Նիւքասլէ Ապրիլ 20 թիւով մասնաւոր հեռագիր մը կ'ծանուցանէ թէ սրընթացութեան փորձերն յաջողութեամբ պսակուեր են։ Զբօսանաւը, փոթորկալի ծովուն հակառակ, որոնցմով հեռաւորութեան մէջ, վեց անգամ երթեւեկելով, ժամը 23 ծովային մղոն միջին արագութիւն մը ցոյց տուեր է։ Ֆէրիգ Հիքմէդ փաշա զբօսանաւուն ընդունիչ է յանուն Կայս. Կառավարութեան։

ՀԱՑԿԵՐՈՅԹ.—Ռուս ընդհ. հիւպատոս Մ. Բանաֆիտին ու իր տիկինը նախընթաց օր հացկերոյթ մը տուին ի պատիւ պարսկական դեսպան Իշխան Միրզա Րիզա Խանի։

ՌՈՒՍ ՎԻՐԱՒՈՐԵԱԼ զինուորներուն և անոնց ընտանիքներուն ի նպաստ հանգանակութիւնը, զոր Պոլսոյ ռուս գաղութը կազմակերպած է, ցարդ 50,000 ֆր.ի յանգած է։ Տիկնանց Մասնախումբը ցարդ 1000 կտոր մեծ ճերմակեղէն ղրկած է Ռուս Կարմիր Խաչի Ընկ.եան որ ռուս ընդհ. հիւպատոս Մ. Բանաֆիտինի միջոցաւ ջերմ շնորհակալութիւն յայտնած է։

ԹՐԻՉ ՄԵՔԵՆԱՆԵՐ.— Ներքին գործոց նախարարութեան հաղորդուած կայսերական Իրատէ մը կ'հրամայէ բարեձեւել հացի խմորին պատրաստութեան դրութիւնը, և պարտաւորիչ ընել թրիչ մեքենաներու գործածութիւնը՝ բոլոր փուռերու մէջ։ Այս տնօրինութիւն անհրաժեշտ դատուած է թէ' տնտեսական և թէ առողջական տեսակէտներով։

ՍԵՐՊԵՒՊՈՒԼԿԱՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ.— Ջէթինէէի պուլկարական գործակատար Մ. Ռիզոֆ նախընթաց օր Պելկրատ գացեր է, Սերպ Կառավարութեան հետ շարունակելու սերպեւպուլկար առեւտրական պայմանագրին բանակցութիւնները։ Կ'յուսացուի որ պայմանագրին յառաջիկայ շաբթու ստորագրուի երկու Կառավարութեանց պատուիրակներուն կողմէ։

ՍԵԼԱՆԻԿԻ կառավարական պաշտօնատան մօտ կեդր. բանտ մը պիտի կառուցուի, որ երկու մասերէ պիտի բաղկանայ, մին այրերուն և միւսը կիներուն համար։ Նոր բանտը պիտի շինուի 2000 քառ. կանգուն գետնի մը վրայ, և երկու յարկ պիտի ըլլայ։ Շինութեան ծախքը գնահատուած է 100,000 ֆր.։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.—Ելմտական նախարար Րէշատ փաշայի դուստր և Հանր. Պարտուց Բօմպօլէր Սայիտ պէյի կողակիցը, որ ժամանակէ մ'ի վեր հիւանդ էր, երէկ վիրաբուժական գործողութիւն մը կրեց։ Երէկ առաւօտ Կայս. հրամանաւ, բժշկական խորհրդակցութիւն մը կատարեցին Կայսերական բժիշկներէն Միւշիր Նաֆիզ փաշա, հռչակաւոր վիրահատ Ֆէրիգ Ճէմիլ փաշա, Տօքթոր Ֆէրիգ Ֆէյզի փաշա, բժշկական վարժարանի ներքին ախտաբանութեան ուսուցիչ Ճէլալ Իսմայիլ փաշա, Հասէքիի կանանց հիւանդանոցին բժիշկ Բէհայ պէյ, արտաքին ախտաբանութեան ուսուցչի օգնական Գնդ. Ճէմիլ պէյ, Կիւլհանէի զարմանատան բժշկապետ Գնդ. Տայէք պէյ, բժշկական վարժարանի մանկաբարձութեան ուսուցիչ Գնդ. Զէքի պէյ, համբաւաւոր վիրահատ Տօքթ. Եաղուպեան էֆ., Տքթ. Սեղբոսեան էֆ., Տքթ. Լէպլէպ պէյ, ֆրանսական հիւանդանոցի բժիշկներէն Տօքթ. Աֆթէօքլիւ և Կիւլհանէի զարմանատան վիրահատ Տօքթ. Վիդինկ, որք հուսկ ապա վիրաբուժական գործողութիւն մը կատարելու հարկն անհրաժեշտ դատեցին։ Վիրահատ Տօքթ. Ճէմիլ փաշա ժամ 10ին ի'նք կատարեց գործողութիւնը, ի ներկայութեան Միւշիր Նաֆիզ փաշայի։ Գործողութիւնն 50 վայրկեանի մէջ ի գլուխ ելաւ կատարեալ յաջողութեամբ, և անմիջական բարւոքում մը զգալի եղաւ հիւանդին վիճակին մէջ, որ ջերմագին բարեմաղթութիւններ ըրաւ Կայսերական արեւշատութեան համար։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ.—Ապահովագրական ընկերութեանց նկատմամբ կանոնագիր մը յօրինելու պաշտօն ունեցող յանձնաժողովը, որուն կ'անդամակցի նաեւ Առեւտրական բարձր. Դատարանի անդամ Ստեփան էֆ. Գարաճեան, երէկ Դատական պաշտօնատան մէջ գումարուելով, շարունակեց իր խորհրդակցութիւնները։

ԱԹԷՆՔԻ Օսմ. դեսպան Րիֆաթ պէյ, որ զինուորական կցորդ Նիզամէտտին պէյի հետ պտոյտ մը կ'կատարէր Վոլոսի, Լարիսայի, Թրիքալայի և Թրհալայի կողմերը, Աթէնք վերադարձեր է։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ Մ. Բոնսդան, որ Բարիզէ արեւելեան ճեպընթաց կառախումբով մեկնած էր Պոլիս վերադառնալու համար, երէկ չկրցաւ մայրաքաղաքս հասնիլ։ Մէկ երկու օր Բէշթա պիտի մնայ։

ՊԱՂՏԱՏԻ մէջ 11 օրէ ի վեր քօլէրայի նոր դէպք չէ պատահած։

ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄ.— Պոլսի Իշխանութիւնք յաջողած են ձերբակալել հռչակաւոր չարագործ Րուշէն անուն Լազ մը, որ իբրեւ եղեռնագործ դատապարտուած էր և փախստական կ'դեգերէր։ Չարագործը մերթ ընդ մերթ Էրէյլիի և Զօնկուլտաքի կողմերն ասպատակելով, հանքահաններուն բանի ծխախոտ կ'ծախէր և ոմանց ալ դրամները կ'յափշտակէր։

ՅԱՆԿԱՐԾԱՄԱՀ.— Ունգարանի մէջ Բանայօթ անուն յոյն մը, Մեծ—Շուկայի մէջ դերձակ Եանի և Հասըր—Իսկէլէսիի կողմն ալ Րայիֆ անուն թուրք վաճառական մը նախընթաց օր յանկարծամահ եղան սրտի հիւանդութենէ։

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ.— Յունաց Պատր. Փոխանորդն երէկ, Բերա, Հայ—Կաթոլիկանց Պատրիարքարանն երթալով, ի դիմաց Տ. Եօաքիմ Գ.ի, ցաւակցութիւն յայտնեց Տ. Պօղոս Էմմանուէլեանի մահուան առթիւ։

ՀԵԼԼԷՆ դեսպան Մ. Կրիբարիս նախընթաց օր այցելութիւն տուաւ Յունաց Պատրիարքին և Սինօդի անդամներէն ոմանց։

ՊԵԼՃԻՔՒՊՈՒԼԿԱՐ ՄԻՋԱԴԷՊ ՄԸ.— Պուլկարիոյ վարչապետ Մ. Պէթրոֆ և Ներքին գործոց նախարար Մ. Պէթքոֆ Սիդնիարօլօ (Զամ—Գուրու) գացին, ուր կ'գտնուի Ֆէրտինանտ իշխան։ Զրոյց կը շրջի թէ նախարարներուն ճամբորդութիւնն առնչութիւն ունի դիւանագիտական միջադէպի մը հետ, որ ծագած է Պուլկարիոյ և Պելճիոյ միջեւ, Պրիւսէլի գաղթային Պանքայէն 130,000 ֆր. գողցող երկու Պելճիացիներու յանձնման նկատմամբ, որք Սոֆիայի մէջ ձերբակալուած էին։ Պուլկար իշխանութիւնները արգիլած էր պելճիական ընդհանուր հիւպատոսին ի գործ դնել իր ձերբակալման իրաւունքը, և ազատ արձակած էր գողերը։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ.—Բերա, Պազար Ալմանի յարակից խանին մէջ բնակող սրճարար Կարապետ, նախընթաց գիշեր, Գուլէգարու, Պարնաթան խանը՝ իր հայրենակից Պօղոսին սենեակը կ'երթայ և հոն կ'գիշերէ։ Երէկ առաւօտ, դանակով մը կ'փորձէ անձնասպան ըլլալ կոկորդը կտրելով։ Վիրաւորեալն հիւանդանոց փոխադրուեցաւ։

ՄԱՀԱՑՈՒ ԱՐԿԱԾ.—Երէկ, Կէօզթէփէյի մէջ, բեռնաբարձ սայլը մը ձիերը խրտչելով, կ'սկսին խօլարշաւ սուրալ։ Սայլապանը, ձիերը զսպելու համար, վար ցատկած ատեն, սայլին անիւներուն տակ կ'մնայ և ստացած ծանր վէրքերէն պահ մը վերջը կ'մեռնի։

ՔՐՈՆԻԿ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ս. Պատրիարք Հայրն երէկ պատարագեց Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ, և քարոզեց կնոջական բարեպաշտութեան վրայ։ Յաւարտ պատարագի, Ս. Պատրիարք Հայրը, կեդրոնական վարժարանի դրան առջեւ բարեմաղթութիւններ ըրաւ վասն արեւշատութեան Վեհ. Կայսեր, որոց սրտագին ամէններով մասնակցեցաւ ժողովուրդը։

⁂ Ղալաթիոյ անգլիական եկեղեցւոյն երէց Տքթ. Սուօպ երէկ տեսակցութիւն մ'ունեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ։

—Հանգուցեալ Տ. Պօղոս Ս. Էմմանուէլեան Պատրիարքին յուղարկաւորութեան ի դիմաց Ս. Պատրիարք Հօր ներկայ պիտի գտնուին Պատր. Փոխանորդ Տ. Գաբրիէլ Սրբազան, Տ. Ղեւոնդ Վ. Դուրեան և Պատրիարքարանի Ա. գործակատար Արիս էֆ. Ֆէճանեան։

—Գոնիայի հրաժարեալ Թաղ. Խորհուրդն իր քով գտնուած կնիքն ու տոմարները չէր յանձնած։ Ապրիլ 4ին Տ. Յովհաննէս քհ.ի միջոցաւ առաջնորդարանի վերաբերեալ բոլոր կնիքներն ու տոմարներն առնուելով, յանձնուեր են Պատր. Փոխանորդ Տ. Վահրիճ Վ.ի։

—Աւասիկ ցուցակը Գոնիայի առաջնորդութեան 15 թեմերուն։ 1.—Գոնիա, ուր կ'գտնուի Ս. Աստուածածին եկեղեցին, 1847ին կառուցուած, ունի երկու քահանայ։ 2.—Ագչէհիր (Ս. Երրորդութիւն, 1859) նոյնպէս Ս. Պետրոս Պօղոս անուն գետնափոր եկեղեցի մը. 3 քահանայ։ 3.—Սպարդա (Ս. Աստուածածին, 1872) մէկ քահանայով։ 4.—Պուրտուր (Ս. Աստուածածին, 1815) մէկ քահանայ։ 5.—Էլմալու (Ս. Գրիգոր Լուսաւորիչ, 1840)։ 6.—Ատալիա (Ս. Յովհաննէս Կարապետ, 1852)։ 7.—Գարաման (Ս. Աստուածածին, 1837)։ 8.—Էրէյլի (Ս. Աստուածածին, 1848)։ 9. — Պոռ (Ս. Աստուածածին, 1837)։ 10.—Պուլկար Մատէն՝ միայն մատուռ մը ունի։ 11.—Նիկտէ՝ (Ս. Աստուածածին, 1860)։ 12.—Նէվշէհիր (Ս. Գրիգոր Լուսաւորիչ, 1860)։ 13.—Ագսէրայ (Ս. Աստուածածին,1840)։ 14.—Սէյտի Շէհիր, ժողովուրդին հոգեւոր պէտքերը կեդրոնէն կ'մատակարարուին։ Միւս բոլոր քաղաքներուն և գիւղերուն մէջ կան մէկ մէկ քահանայ։ Այս թեմերը կեդրոնէն 4—5 ժամ կամ 2—3—4 օր հեռաւորութիւն ունին։

—Գոհութեամբ կ'տեղեկանանք որ Պոլսոյ Հայ փաստաբաններու շարքին վրայ կարեւոր յաւելում մը եղած է այս օրերս, յանձին Արմենակ էֆ. Ինճէեանի, որ Բարիզի համալսարանին մէջ փայլուն յաջողութիւնով աւարտած է իր ուսմանց ընթացքը, և Լիսանսիէի վկայականն ստանալով դարձած է մայրաքաղաքս, և հաստատուած է Ղալաթիա, Մէհմէտ Ալի Փաշա խան։ Իր պարկեշտ և ուղիղ նկարագիրը ծանօթ ըլլալով արդէն, վստահ ենք որ գոհ պիտի թողու մեր վաճառական հասարակութիւնը։

—Յառաջիկայ Աշխարհամատրան կիրակի օր, 11 Ապրիլ, գիւղիս Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ օծման 73րդ տարեդարձին առթիւ՝ Ամէն. Ս. Պատրիարք Հայրն հրաւիրուած է Ս. Պատարագ մատուցանել, յորում եկեղեցւոյ և վարժարանին հիմնադրաց և բարերարներուն համար մասնաւոր աղօթքներ պիտի կարդացուին և հոգեւորապէս մխիթարել բարեպաշտ ժողովուրդը։

Եկեղեցական արարողութեանց պիտի սկսուի առաւօտուն ժամ 12ին, և Ս. Պատարագին՝ ժամ 2½ին։

Թաղ. Խորհուրդս այս առթիւ կ'ծանուցանէ թէ բարեպաշտ ուխտաւորաց դիւրութեան համար՝ Ոսկեղջիւրի շոգենաւերը նոյն օր առաւօտուն պիտի հանդիպին ուղղակի Հալըճը—Օղլուի նաւամատոյցը։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Ատենադպիր Ատենապետ
Գ. Հայկեան Եղիա Շահպազեան

ՕԳՏԱԿԱՐ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԳԱՒԱՌԱՑՒՈՅ
ՅԱՆՁՆԱՌՈՒ ԴՐԱՍԵՆԵԱԿ

Գաւառներէ ըլլալիք ամէն յանձնարարութիւնք և ապսպրանք փութով և կանոնաւորութեամբ կ'կատարուին։ Ամենափոքր յանձնարարութիւնք կ'ընդունուին % 5 յանձնարարողչէքով (մեծաքանակներու տարբեր պայմաններ)։ Առեւտրական, սեղանաւորական, պաշտօնական ու դատական գործեր կ'ստանձնուին և հետապնդումներ կ'կատարուին, ամէն կողմէ հասցէներ ու վարկի վրայ վաւերական ծանօթութիւններ կ'տրուին, Բօլէ-ի-Ճի համար աշխարհիս ամէն կողմէն պատկերազարդ քարտեր ստանալ և թղթակցիլ փափաքողներու հասցէներն 3 ֆրանքով կ'արձանագրուին եւրոպական լրագրաց մէջ. ուղղուած տեղեկութեան անմիջապէս կ'պատասխանուի, եթէ նամակի ծախքը ներփակ ըլլայ։ Գրութիւնք կ'ուղղուին Կ. Պոլիս, Պահճէ—Գարու, Իհսան պէյ խան ՄԻՀՐԱՆ ԳԱՍԱՐՃԵԱՆԻ։ 10—3

ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԲԱԴԱՆԱ, Ապրիլ 21.— Վիլհէլմ Կայսր Պարի ուղեւորեցաւ։

ՎԻԵՆՆԱ, 21.— Երեկոյին Հօֆպուրկի պալատին մէջ հանդիսական հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ Կալլէսի իշխանին ու իշխանուհւոյն։ Ներկայ գտնուեցան նաեւ Կայս. գերդաստանին անդամները, նախարարք և արքունի բարձր աստիճանաւորք։ Ֆրանց Եօզէֆ Կայսր և Անգլիոյ գահաժառանգ իշխանն յոյժ սիրալիր բաժակաճառեր արտասանեցին, ի վեր հանելով վեհապետական երկու գերդաստաններուն և իրենց երկիրներուն միջեւ տիրող սերտ բարեկամութիւնը։ Յետոյ հանդիսական ներկայացում մը տեղի ունեցաւ Օբերայի մէջ և պարահանդէս մը՝ Ֆրանց Ֆրիտրիխ արհիդուքսին ապարանքին մէջ։

ՎԻԵՆՆԱ, 21.— Բօլիդիչէ Քօրէսբօնտէնց Սելանիկէ կ'իմանայ թէ ասպատակապետ Ռուվլոնուչէֆ և Սուկարէֆ անձնատուր եղեր են Րումէլիի նահանգներու ընդհ. քննիչ Հիւսէյին Հիլմի փաշայի, որով անցեալ տարուան ապստամբական գործերը բոլորովին վերջացած կրնան համարուիլ։

ՆԱՅԻՕՆԱԼԻ ԵՒ ՖՈՒԻՆԻԿԻ

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, Ապրիլ 21.— Ռուսիոյ պատերազմական ծախքը 92 միլիոն րուպլի հասած է մինչեւ Ապրիլ 5։ Մինչեւ Յունիսի վերջը 200 միլիոն րուպլի գնահատուած է, և եթէ պատերազմն 18 ամիս երկարաձգուի, պատերազմական ծախքն իւր 800 միլիոն րուպլի պիտի հասնի։

ԲԱՐԻԶ, 21.—Այժմ ստուգուած է թէ Ռուսիա գալ ամիս փոխառութիւն մը հրապարակ պիտի հանէ, որուն գումարը դեռ վերջնապէս որոշուած չէ։ (Երէկ Բարիզէ հեռագիր մը մէկ միլիառ ֆր. կ'ըսէր։)

—21.— Բարիզի ռուսական դեսպանատան մէջ կ'մերժեն ըսել թէ ծովակալ Ալեքսէյէվի հրաժարականը պաշտօնապէս հաստատուա՞ծ է թէ ոչ։ Ընդհ. կարծիքը սա է թէ ծովակալ Ալեքսէյէվ հրաժարած է, բայց Ցարը պիտի չընդունի հրաժարականը։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ, 21.— Պաշտօնական ո և է հեռագիր չէ հաստատած այն լուրը թէ Ռուսք գրաւած են Բաքչէնկ քաղաքը։

ԼՈՆՏՈՆ, 21։ —Անգլ. լրագիրք Սէուլէ հեռագրեր կ'հրատարակեն ծանուցանող թէ ճափոնական նաւատորմին մէկ մասը կ'պատրաստուի ամրակածելու Նիուչուանգը, ամրութիւնները քանդելու համար։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Մնակեան էֆ.ի բազմաթիւ համակիրներն ուրախութեամբ պիտի լսեն որ Օսմ. Թատերախումբն Շբ. գիշեր ժամ 2½ին, Գատըգիւղի Ֆէռնայիի Թատրոնին մէջ պիտի ներկայացնէ հանրահռչակ Սգրիպի մէկ բարոյալից ու հետաքրքրաշարժ տրամը, «Կնոջ մը տասնամեայ կեանքը» 9 արար, և ծիծաղաշարժ զաւեշտ մը մէկ արար, ի նպաստ խումբին հաւատարիմ անդամներէն Աղեքսանդր Եալտըզճեան էֆ.ի։ Անշուշտ թատերասէր հասարակութիւնն արժանավայել ընդունելութիւն պիտի ընէ Մնակեան էֆ.ի սոյն փայլուն սկզբնաւորութեան։

ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱ

Օսմ. Պանքան, փոքր վարձքի մը փոխարէն, իբրեւ աւանդ կ'ընդունի թէ' անունի արձանագրուած և թէ ունեցողին յատուկ օսմ. և օտար ամէն տեսակ բաժնեթուղթեր ու պարտաթուղթեր, որք «Հաթ Տոռ» կոչուած երկաթէ դրամարկղերու մէջ կ'պահուին. առոնք կ'գտնուին չիմէնթոյէ շինուած և զրահով պատած հաստատուն նկուղներու մէջ։ Այդ կերպով բաժնեթուղթ ու պարտաթուղթ յանձնողներուն օսմ. Պանքան ընկալագիր մը կուտայ, որուն մէջ կ'արձանագրուի ն վճարահանութիւն ունեցող բաժնեթուղթերու և արժէթուղթերու թիւերը։ Օսմ. Պանքան առանց յանձնարարողչէքի ու տէրոջը կողմէ առանց դիմումի պէտք մնալու, կ'գանձէ յանձնուած բաժնեթուղթերուն և պարտաթուղթերուն կտրօններուն փոխարժէքը, եթէ Կ. Պոլսոյ մէջ վճարելի են։ Օտար երկիրներու մէջ վճարուելիքներն ալ փոքր յանձնարարողչէքով կը գանձէ և փոխանակագրի հրապարակին ամէնէն օգտակար գիներովը կ'հաշուէ։ Առանք պայմանաժամին և կամ գանձման թուականին տէրերուն հաշուոյն իբրեւ հասոյթ կ'արձանագրուին։ Փոխարժէքը ժամանակին գանձուելու համար պայմանաժամէն 20 օր առաջ կտրօնները կ'անջատուին արժէթուղթերէն։ Օսմ. Պանքան նաեւ Բարիզի և Լոնտոնի ճիւղերուն, Աղեքսանդրիոյ, Գահիրէի, Իզմիրի ու Պէրութի նման Օսմ. գլխաւոր քաղաքներու իր մասնաճիւղերուն և Աթէնքի, Պերլինի, Պրիւսէլի, Պուքրէշի, Հռոմի ու Վիեննայի իր գործակալներուն մօտ ալ իբրեւ աւանդ կ'ընդունի ու կ'պահէ արժէթուղթեր ու պարտաթուղթեր։ Առոնց տակոսներուն փոխարժէքը Կ. Պոլսոյ մէջ պատրաստ կ'պահէ յանձնողին հրամանին և կամ անոր հաշուոյն իբրեւ հասոյթ կ'արձանագրէ։ Վերագրեալ ճիւղերու և գործակալներու մօտ պահուած բաժնեթուղթերն և պարտաթուղթերը տեղւոյն մէջ յանձնուիլ կրնայ անձամբ ետ առնել. նաեւ անոր բնակավայրին ալ կ'ղրկուի։ Օսմ. Պանքան սակարանի գործառնութեանց վերաբերեալ ամէն տեսակ յանձնարարութիւններ՝ այսինքն կանխիկ ու պայմանաժամով արժեթուղթ գնելու և վաճառելու գործողութիւնները կ'կատարէ, թէ' Կ. Պոլսոյ և թէ օտար երկիրներու մէջ։ Արեւելեան երկաթուղիներու, Բաղտատի Քրէտի Ֆոնսիէ Էժիբսիէնի, հելլէնական ազգային Պանքային պարտաթուղթերը, օսմ. ապահովագրական Ընկերութեան բաժնեթուղթերն են. հրապարակի գինով փափաքողներուն կը վաճառէ և իսկոյն կ'յանձնէ։ Օսմ. Պանքան յանձն կ'առնէ բաժնեթուղթերու և պարտաթուղթերու փոխանցումը, փոխանակութիւնը, կտրօնի թուղթերուն նորոգումը, վճարումներն և վերջապէս արժեթուղթերու վերաբերեալ ամէն տեսակ գործողութիւններ՝ յատուկ սակացոյցին համեմատ. նաեւ օսմ. և օտար բաժնեթուղթերու և պարտաթուղթերու փոխարէն, ընթացիկ հաշիւի եղանակով, և խիստ չափաւոր պայմաններով դրամ փոխ կուտայ։ Միանգամայն օսմ. և օտար բաժնեթուղթերու և պարտաթուղթերու ոմանց կտրօնի փոխարժէքը պայմանաժամէն առաջ կ'զեղչէ։ Օսմ. Պանքան իր յանձնորդներուն մէջ իբր աւանդ պահուած պարտաթուղթերու և բաժնեթուղթերու կտրօններուն փոխարժէքն առանց յանձնարարողչէքի կ'վճարէ։ Օսմ. Պանքան սեղանաւորական գործառնութեանց մասին տեղեկութիւն առնելու պարտաւոր դիւան մ'ունի որ կրնայ ձրիաբար տեղեկութիւն հաղորդել՝ սակարանն ընդունուած կամ չընդունուած բաժնեթուղթերու և պարտաթուղթերու մասին։ Կարգ մը պարտաթուղթերու հրապարակի գինը բարձր է անոնց հրապարակ հանուելու գինէն, որով զանոնք հրապարակէն բարձր գինով գնողները, երբ վճարահանութիւն կատարուի, բնականաբար իրենց տուած դրամէն վար գումար մը պիտի ստանան։ Օսմ. Պանքան, իբրեւ ապահովագին փոքր վարձքի մը փոխարէն, այդ պարտաթուղթերու տէրերը վնասէ զերծ կ'պահէ' իրենց տուած դրամը նոյնութեամբ ստանալու համար։ Այդ ապահովագինն որոշ չըլլալով, դիմում ընողին պիտի յայտնուի։

CAISSE PATERNELLE
ՔԷՍ ՓԱԹԷՐՆԷԼ
ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻԶ 1841 ԻՆ
Կ'ԳՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՌՈՒՆ ՏԱԿ

ՍԿԻԶԲԷՆ Ի ՎԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼՆԵՐՈՒ ԵՂԱԾ ՎՃԱՐՈՒՄ 300 ՄԻԼԻՈՆ ՖՐ.
ՍԿԻԶԲԷՆ Ի ՎԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ 700 ՄԻԼԻՈՆ ՖՐ.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՖՐ. 85,000,000
ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ » 62,750,000

[illegible] 74%, [illegible] ՔԷՍ ՓԱԹԷՐՆԷԼԻ [illegible]

Ընկերութեան Վարչական Խորհուրդը կազմուած է Ֆրանսայի ամէնէն նշանաւոր դրամատէրներէն, ինչպէս
Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեաց ընկերութեան և Քրէտի Լիոնէի Վարչական Խորհրդոյ անդամ.
Մ. ՄԱՐՔԻԶ ՏԸ ՖԼԷՐ, Դրամատղլանդիք ընկերութեան Վարչական Խորհրդոյ անդամ.
Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼՀԷՄ, նախկին գանձապահ.
Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիոնէի.

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ
Սթամպօլ, Սուլթան—Համամ, Բասամ Քալթըճըօղլու.

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիոնէի.

ԾԱՆՕԹ.— [illegible]

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ

ՍԱԿԱՐԱՆ ՂԱԼԱԹԻՈՅ

ՓԱԿՈՒՄ

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	90 29
Ամէնէն բարձր գին	»	90 30
Ամէնէն վար գին	»	90 01
Րումէլի երկաթուղի	Ֆր.	120 37½
Ամէնէն բարձր գին	»	120 50
Ամէնէն վար գին	»	120 —
Թրամվայ	»	116 —

ԲԱՑՈՒՄ, 9/22 Ապրիլ

Օսմանեան Միացեալ	Օ. Ո.	90 33
» »	ժամ 6ին	90 35
Րումէլիի Երկաթուղի	ֆր.	121 50
» »	ժամ 6ին	121 62
Հելլէնեան պարգեւատոմ թուղթ	ֆր.	431 50
Ռէժիի բաժնեթուղթ	Օ. Ո.	16 25
Եգիպտ. Քրէտի Ֆոնսիէ Ա.	ֆր.	290 —
» » » Բ.	»	275 —
Բարափ Կ. Պոլսոյ	»	513 50
Անատոլուի Երկթ. պրտթ.	»	526 —
» » բժնթ.	Ա. Ո.	11 75
Թրամուէյ բաժնեթ.	Ղրշ.	600 —
» Ժուիսանս	»	180 —
» պարտաթ.	ֆր.	488 —
Թէմպէքիի բաժնեթուղթ A	»	27 —
» » B	»	18 —
» պարտաթուղթ	»	450 —
Տէրքոս Ջուրի Ընկ.	»	253 —
Բարափ Իզմիրի	»	565 —
Շիրքէթի Խայրիյէ	Օ.Ո.	30 —
Հելլենական 5% 1881	Ֆր.	215 —
Թրամվայ	»	116 —
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»	65 50
Օսմ. Ապահովագր. Ընկ.	Օ.Ո.	4 65

ՍԹԻԼԱՆՑ

Քոնսոլիտէ մէկ օրուան	Օ.Ո.	7 — —
» ութ օրուան	»	17 — —
Րումէլիի Երկթղ. »	Ֆր.	3.50 —

ՕՍՄ. ՊԱՆՔԱՅԻ ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

ՀՐԱՊԱՐԱԿԸ

	ՎԱՃԱՌՈՒՄ	ԳՆՈՒՄ
Լոնտոն 3 ամիս	111 05	110 —
» չէք	110 20	110 —
Բարիզ 3 ամիս	22 65	22 85
» չէք	22 75	22 85
Պերլին մարք	18 49	18 59
Վիեննա քուրոն	21 69	21 79

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Անգլիական ոսկի	Ղրշ.	109 39
20 ֆրանքնոց	»	87 19
20 մարքնոց	»	107 05
Բօլ Էմբէրիալ	»	90 10
Քրիմից	»	51 04
Մէճիտիյէ արծաթ	»	108 07
Նոր Մէթալիք	»	104 10
Պէշլիք	»	103 30
Րուպլ թղթադրամ	»	8 62

Անտրէ Ա. Անտրէադէս, Ղալաթիա.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍԱԿԱՐԱՆՔ

ԼՈՆՏՈՆ, Ապրիլ 21

Օսմանեան Միացեալ բաց.	Ա.Ո	82 35
» » գոց.	»	82 62
Օսմ. Կայս. Պանքա	»	13 12
Եգիպտական Միացեալ	»	107 —
Սմյուռնի Երկաթուղի	»	14 50
Անգլ. Քոնսոլիտէ	»	88 25
Փոխառութիւն Գասապա	»	89 50
» Հելլենական 1881	»	43 —
Մօնօբոլ »	»	44 50
Պուլկր. Փոխառթ. 1888	»	91 —
» » Նոր 1892	»	91 —
Փոխան. Բարիզի վրայ	»	25 32½
Թրամվայ	»	4 56
Ճափոնական 1891	»	66 25
» 1902	»	— —
Դրամազեղչ	»	3 ½

ԲԱՐԻԶ, Ապրիլ 21

Օսմանեան Միացեալ բաց.		83 17
» »		83 95
Րումէլիի Երկաթուղի	ֆր.	122 75
Օսմ. Կայս. Պանքա	»	579 —
Օսմ. Մաքս. Նոր Փոխառ. 4%	»	451 —
Ռէժիի բաժնեթուղթ	»	370 —
Ֆրանս. Ռանթ 3%	»	97 60
Քրէտի Լիոնէ	»	1104 —
Պանք տը Բարի	»	1103 —
Սպանիական արտաքին	»	83 30
Իտալական Ռանթ	»	102 57
Ռուսական 3% 1891	»	79 50
Թրամվայ	»	116 —
Չէք Լոնտոնի վրայ	»	25 12½
Դրամազեղչ Ֆրանս. Պանքայի		3 —

ՎԻԵՆՆԱ, Ապրիլ 21

Փոխան. Բարիզի վրայ	քուրոն	95 35
» Լոնտոնի վրայ	»	239 50
Րումէլի Երկաթուղի	»	131 75
Օսմ. Ռէժի	»	343 —
Դրամազեղչ		3 ½

ՊԵՐԼԻՆ, Ապրիլ 21

Օսմ. Միացեալ		82 60
Անատոլուի Երկ. պարտաթ.	մարք	103 50
» » բաժնթ. 60%	»	95 —
Րումելիի Երկաթուղի	»	130 50
Փոխ. Լոնտոնի վրայ 3 ամս.	»	20 30
Ճափոնի փոխառութիւն 1903		84 40
Դրամազեղչ		4 —

ԴՈՒՔ ՈՐ ՖՐԱՆՍ. ՔՈՆԵԱՔ Կ'ԳՈՐԾԷՔ, փորձեցէք նաեւ Յունաստանի ամէնէն մեծ զտարանին հելլէնական [illegible], որ առաջնութեան վկայագիր տարբերէ զերծ է

ԷՖԹԱԹԻՈՍ Ա. ՖԻՆՕՊՈՒԼՕ
ՀԱՅԹԱՅԹԻՉ
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՎԵՀ. ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ԻՇԽԱՆԻՆ
ՌՕՄ

Անգլիականներէն լաւագոյն և անմրցելի գիներով։

Է. Ա. ՖԻՆՕՊՈՒԼՕ զտարանն որ Յունաստանի և Թուրքիոյ քօնեաքի բոլոր գործարաններուն կ'հայթայթէ գինիի ոգի, Յունաստանի նմանօրինակ հաստատութեանց ամէնէն մեծը, հինն ու կատարելագործեալն է։

ՀԻՄՆՈՒԱԾ Է 1860 ԻՆ

Պէրլին և Աթէնք այցելողները տեսած են Մ. ԷՕՍՏԱԹԻՈՍ Ա. ՖԻՆՕՊՈՒԼՕՅԻ «Հէպ» զտարանը, որ կ'գտնուի Ֆալէրի երկաթուղւոյ կայարանին ծայրը։

ԷՕՍՏԱԹԻՈՍ Ա. ՖԻՆՕՊՈՒԼՕ

զտարանն ամէն տարի 4,000,000 օխա գինիի ոգի կ'արտադրէ։ Միակ ներկայացուցիչ [illegible]


50—23 Տ. ՊՕԵԱՃԻՍ

Գրասենեակ և մթերանոց Քիւչիւք Միւլէթ խան 2, Ղալաթիա։

☞ Տեսէք Չորրորդ երեսին մէջ Վիքտորիա որ Պերլին ապահովագրական Ընկերութեան ազդը։

ՄՈՐԹԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆԷ ՏԱՌԱՊՈՂՆԵՐՈՒՆ

Չ'կայ հիւանդութիւն մը տաղտկալի և զանեցուցիչ, որչափ մորթի հիւանդութեան ամէն տեսակը։ Հասարակութիւնը կարծելով որ այս կարգի հիւանդութիւններ արեան ապականութենէ առաջ կուգան, չատ անգամ յանիրաւի կը զանէ մորթի հիւանդութիւն ունեցողները։ Տիկին Թրիպովել իր նամակովը կը գրէ « Երկար տարիներէ ի վեր մորթի հիւանդութենէ կը տառապիմ. տղայ հասակէս ի վեր վէրքեր կը հանէի դէմքիս վրայ որոնք կեղև կը կապէին ու Մաչխանային, յետոյ երեսիս վրայ ԹՈՒՋԼՈՒ ՊԱԼՍԱՄ հանեցի, չատ դեղ ըրի, անկարելի եղաւ բժշկել։ Քիչ մը վերջ վիզս կոկորդս վէրքերով լեցուեցաւ, առնցմէ թարախ կը վազէր անընդհատ։ Հիւանդութիւնս խոլ (սրբանոց) կարծելով ձկան իւղ գործածել սկսայ որ բնաւ օգուտ չունեցաւ։ Իսկ պզտիկներն ու պալարներն որք երեսս վիզս և ամբողջ մարմինս ծածկած էին վերջին ծայր կը զազրելի կ'ընէին կացութիւնս։ Եթէ այս վէրքերէն մին պատահմամբ հագուստներուս կարծր մասին դպչէր, զգացած ցաւերէս կը մարմրէի։ Շատ անգամ քունէս կը ցատկէի ու չէի կրնար քնանալ, երբ վէրքերս ցաւիլ կոճղելու խղխղալ սկսէին։ Շարունակ թաշկինակ մը կը կապէի վիզիս վրայ, պալարներն ու վէրքերը ծածկելու համար և այնչափ տխուր երեւոյթ ունէի որ ամենամօտ ազգականներս իսկ կը զանէին ինծմէ։ Շատ մը սպեղանիներ, եղեր, ջուրեր, դեղեր գործածեցի և ոչ մէկը օգուտ ըրաւ։ Մօրս թախանձանքին չ'կրնալով դիմանալ կատարեալ թերահաւատութեամբ ԿԻՒԵՕՐ ԽԱՑՏԼԱՆ (գաթրան) գործածել սկսայ, մէկ ամիս չանցած տեսնեմ՝ տասը տասնըհինգ օր վերջ մարմնոյս վրայի պալարներուն, վէրքերուն մէջ թարախ չի մնաց։ Աստուծոյ փառք, առողջացան, սպիացան, ու երեսիս ԹՈՒՋԼՈՒ ՊԱԼՍԱՄԸ աղէկցաւ և վէրքերուս սպիներն անգամ անյայտ եղան։ Վերջապէս երբ ԿԻՒԵՕՐ ԽԱՑՏԼԱՆԻՆ մէկ չիչը ամբողջ խմեցի, չ'ճանչցուելու աստիճան աղէկցայ, մորթերս փափկացան, որովհետև թէ բնաւ հիւանդացած չ'ըլլայի։»



Ամէն ճաչէ առաջ, դգալ մը ջուրի մէջ մէկ սուրճի դգալ ԿԻՒԵՕՐ ԽԱՑՏԼԱՆ դնելով խմել բաւական է բուժելու մորթի հիւանդութեանց ամէն տեսակը, որովհետև խայծքանը ազդու հակաթոյնիչ է և արիւնը կը մաքրէ, միքրոպները սպաննելով։

Եթէ ճշմարիտ ԿՈՒՏՐՕՆ ԿԻՒԵՕՐ տեղ այս կամ այն դեղն առնել առաջարկեն ձեզ, իբր անոր չափ ազդեցիկ, զգուշացէք չահամոլութեան համար կ'ընեն այդպիսի առաջարկներ։ Եթէ կ'ուզէք արմատապէս բուժել Ձեր ամէն տեսակ մորթի հիւանդութիւնը, ԿԻՒԵՕՐ ԽԱՑՏԼԱՆ պահանջեցէք դեղարաններէն։ Այս դեղ Նորվեկիոյ Եղևնիի խայծքանէն կը պատրաստուի, զոր խայծքանը լուծելի ընելու վրայ հեղինակը Պ. ԿԻՒԵՕ կը պատրաստէ։

Այս պատճառով իր նման դեղերու ամենազդեցիկն ու անվրէպ բժշկողն է։ Զը խաբուելու համար ուշադրութիւն ըրէք շիշերուն վրայի պիտակին որ պէտք է պարունակէ ԿԻՒԵՕ բառը Գաղ. մեծ գիրերով տպուած, անոր տակը, Պ. ԿԻՒԵՕԻ ստորագրութիւնը կարմիր, կանանչ և մանիշակագոյն մելանով չեղակի գրուած նոյնպէս հետեւեալ հասցէն Maison Frere, 19, rue Jacob, Paris.

Այս դեղին բժշկութիւնը օրական 20 փարայի կուգայ որ անպատճառ կը բժշկէ հիւանդը։

Ծան. Անոնք որ խայծքանի ջուրէն չեն ախորժիր, անոր տեղ ամեն ճաշի ժամանակ 2-3 հատ ԿԻՒԵՕՐ ՔԱՓՍՈՒԼ կրնան կլլել, ինչ որ Նորվեկիոյ եղեւիններու խայծքանէն պատրաստուած ըլլալով բուժիչ ազդեցութիւնն ունի եւ կատարեալ կը դիւրացնէ մարսողութիւնը, որովհետև խայծքանը խիստ օգտակար է ստամոքսին, և մարմնոյն կազմուածքը ուրիշ վտանգներու դէմ կը պաշտպանէ։ ԿԻՒԵՕԻ ճշմարիտ քափսուլները ճերմակ են որոնց իւրաքանչիւրին վրայ ԿԻՒԵՕԻ ստորագրութիւնը կայ սեւ գրով։ Թէ ԿԻՒԵՕԻ խայծքանը եւ թէ քափսուլը ամէն դեղարաններու եւ մթերանոցներու մէջ կը ծախուին։ (5)

Վ·Ի·ՔԹՕՐԻԱ ՏԸ ՊԷՐԼԷՆ

VICTORIA DE BERLIN

ԿԵԱՆՔԻ ԱՆԱՆՈՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆԵԱԼ 26 ՍԵՊՏ. 1853Ի ՊՐՈՒՍԻԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ

ԵՒ ՈՒՂՂԱԿԻ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՒ

ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ԳՈՒՄԱՐ 3'1903 1,325,000,000 ֆր.
ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ ՄԻՆՉ 1903 510,000,000 ֆր.

ՎԻՔԹՕՐԻԱ ՏԸ ՊԷՐԼԷՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՄԵՆԷՆ ՀԶՕՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ Է

Ունի պայմաններ զորս Թուրքիոյ մէջ գործող ընկերութեանց և ոչ մին կրնայ կատարել։ Զոր օրինակ. 30 տարեկան անձ մը 25 տարուան տեւողութեամբ խառն (mixte) ապահովագրութեան մը համար առաջին երեք տարիները պարտի վճարել 424 ֆր., երրորդ տարիէն վերջը կ'սկսի ամէն տարի չարունակ 10, 13, 16, 19, 22, 24 և այսպէսով մինչեւ 66 % զեղչուիլ վերջին տարին, որով 25 տարուան մէջ ընդհանուր վճարածը կ'ըլլայ 6255 ֆր. և զուտ չահ 3745 ֆր.ով կ'ստանայ ճիշտ 10,000 ֆր.։

Բոլորովին անջատ ժողովրդական ճիւղ մ'ալ ունի չաբաթական վճարումներով և առանց բժշկական քննութեան։

ԱՐԿԱԾԻ ՃԻՒՂ

Ապահովագրութիւն չոգենաւի, երկաթուղիի, թիւնէլի և թրամուէյի են. արկածներու դէմ ամբողջ կեանքի տեւողութեան համար, մի միայն մէկ տարեկան վճարումով, այն է 52 ֆրնք. 10,000 ֆր. մահուան պարագային, 15,000 ֆր. արկածէն յառաջ եկած անկարողութեան պարագային և օրական 5 ֆր. ժամանակաւոր անկարողութեան պարագային։

Ընկերութեան գրասենեակն է Օսմ. Կայս. Պանք է Պոլիս, Բրէոթ Լիմէ, Դիէյ. Կայս. Պանկան

Տեսուչ ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԷՉԷՃԵԱՆ — Լիազօր ներկայացուցիչ՝ ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ—ԳԱԼՖԱՅԵԱՆ, Պոլիս, Բաթրճըօղլու խան, թիւ 45 և 45 bis.

ՌՕՍԻԱ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1881 Մարտ 20ի Կայս. Իրատէով արտօնեալ
Ընկերութեան կեդրոնատեղին Բեդերսպուրկ
Ընկերութեան ապարանքը, Մեծ Մորսքայա 37

Դրամագլուխ ամբողջովին վճարեալ	10,666,667 ֆր.
Երաշխաւորութեան գումար	137,300,000 »
1902ի հասոյթը	54,000,000 »
1881էն ի վեր Ընկերութիւնը իր ապահովագրեալներուն վճարած է մօտ	282,000,000 »

Ընկերութիւնը չատ նպաստաւոր պայմաններով կ'ապահովագրէ հրդեհի, փոխադրութեանց վտանգներու, ամէն տեսակ արկածներու դէմ և կեանքի վրայ։ Նաև ճամբորդութեանց արկածներու դէմ ցկեանս թոշակի ապահովագրութիւն, երկաթուղիով և չոգենաւով ճամբորդութեանց արկածներու և ապակիներուն կոտրելուն դէմ են։

Դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա փողոց, Ղալաթիա։

Տնօրէն Կ. Պոլսոյ մասնաճիւղին
Ա. ՀԻՐՄԻՒՁ

ԵՈՒՆԻԸՆ

ՄԱՐԻՆ ԻՆՇՈՒՐԸՆՍ ՔԸՄՓԷՆԻ ԼԻՄԻԹԸՏ

THE UNION MARINE INSURANCE COMPANY LIMITED

ՀԻՄՆԵԱԼ 1863ին

ՎՃԱՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	163,500 ոսկի.
ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ	340,000 »
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԳՈՑՔ Ա. ԽԵԼԻ ՔԱՆ	1,000,000 »

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ
ԼԻՎԸՐՓՈՒԼ ԷՆՏ ԼԸՆՏԸՆ ՉԷՄԲԸՐՍ
Ի ԼԻՎԸՐՓՈՒԼ

ՄԱՍՆԱՃԻՒՂԸ
3, ՌՕԵԸԼ ԷՔՍՉԷՆՃ ԲԸԼՏԻՆԿՍ
ԼՈՆՏՈՆ
47, ՍՓՐԻՆԿ ԿԱՐՏԸՆՍ
ՄԱՆՉԷՍԴՐ
22, ՌՕԵԸԼ ԷՔՍՉԷՆՃ ՍՔՈՒԷՐ
ԿԼԱՍԿՕ

Ընդհանուր ներկայացուցիչ Թուրքիոյ
ԷՏՈՒԸՐՏ ԼԱՖՕՆՏԷՆ
20, Մէհմէտ Ալի փաշա խան
Ղալաթիա

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լիվըրփուլ, Մեդիթէրանէ, Սև ծովու և Պօրտոյի միջև բանող չոգենաւեր

ՃԱՄԲՈՐԴ ՓՈԽԱԴՐՈՂ ՇՈԳԵՆԱՒԵՐ

Անուն	Թոն.	Անուն	Թոն.
(Շինուելիք)	4000	Թէյպըր	3000
Բոմպասա	3500	Կաօքոնի	1500
Մինիա	3500	Կիէն	1500

«Ֆարօս» չոգենաւը, Նաւապետ Նելիկէն ամսոյս դէպ ի 29ին Լիվըրփուլէն հոս կ'հասնի ընդհանուր վաճառքով։

Այս չոգենաւեր չատ հանգստաւէտ են, նաւուն մէջտեղ ընդարձակ սենեակներ ունին, ելեկտրականութեամբ կը լուսաւորուին և Տեսչուհի ունին կին ճամբորդներու համար։

ԱՊՐԱՆՔ ՓՈԽԱԴՐՈՂ ՇՈԳԵՆԱՒԵՐ

Անուն	Թոն.	Անուն	Թոն.
Մէաթա	5000	Էմէյաթա	3200
Ֆոյեիւ	4500	Ֆէրօս	3000
Նայլոգբրիա	4200	Թիպա	2500

Այս չոգենաւերը առժամանակ թաւով ճամբորդներ կ'առնեն Բ. կարգի համար, բայց Տեսչուհի չունին։

Կ'խնդրուի վաճառականներէն որ փոխադրութեանց համար իրենց ապրանքները տան մինչեւ չոգենաւուն եկած օրը։ Երկրորդ օրուան մաքսիները անընդունելի են։

Լիվըրփուլէն Պոլիս կամ Աղեքսանդրիա Ա. կարգին գինն է 15 ոսկերլին, և Բ. կարգինը 11 ոսկերլին։ Ապրանքներ կ'ընդունուին ուղղակի տոմսակներով Ամերիկայի և Եւրոպայի նաւահանգիստներէն և Աւստրալիա։

Դիմել առ Ժ. Վ. Ուիթօլ և Ընկ.
Գործակալք
Ուիթօլ խան, Պահճէ գափու, Պոլիս
ՃԷՅՄՍ ՄՈՍ ԸՆԿ.
31 Ճէյմս Սդրիդ, Լիվըրփուլ.

ՋՂԱՅԻՆ ԷՔ

ԿԱՐԴԱՑԷ՛Ք, ՊԻՏԻ ԲԺՇԿՈՒԻՔ

Ամէնէն չնչին պատճառով չատ անգամ ջղային հիւանդութեան կ'ենթարկուի մարդ և եթէ կարեւորութիւն չտալով անփոյթ գտնուի ինքզինք դարմանել տալու, հիւանդութիւնն աստիճանաբար կ'յառաջանայ և մինչեւ իսկ ապագայ զաւակներու կ'փոխանցուի։ Լուսնոտները, կաթուածահարներն և ուրիշ ջղային հիւանդութենէ տառապողները, կամ այն է որ իրենց ծնողացմէ ժառանգած են սոսկալի հիւանդութիւնն և կամ հիւանդութեան նոր սկսած ատեն կարեւորութիւն չտալով անոր, իրենց ալ սօրուան դժբախտ վիճակին հասած են։

Ջղային հիւանդութեանց ամէն տեսակն ալ չուտով կ'բժշկուի, եթէ հիւանդը կանոնաւորաբար գործածէ ՎԱԼԷՐԻԱՆԱԹ Տ'ԱՄՕՆԵԱՔ ՏԸ ԲԻԷՐԼՕ անուն աշխարհահռչակ դեղը։

Այս դեղ անմիջապէս կ'հանդարտեցնէ ջիղերն և ջղային հիւանդութեանց ամէն տեսակն արագ և վերջնականապէս կ'բժշկէ։ Անքնութիւնը, քնաշրջիկութիւնը, կէս գլխու ցաւը, անդամալոյծ ծուլութիւնը, խեղդութիւնը, ժառագկոտութիւնը, խօսելու անկարողութիւնը, ցնցկոտութիւնը, դիւրագրգռութիւնը, ջղային հազը, սրտի բաբախումը, մարելիքը, գլխապտոյտը, կանանց սովորական անկանոնութիւնը, գժտաբադդտատանութիւնն ու ջղային հիւանդութեանց ամէն տեսակը կ'բժշկուին ՎԱԼԷՐԻԱՆԱԹ Տ'ԱՄՕՆԵԱՔ ՏԸ ԲԻԷՐԼՕ գործածելով։ Կգտնեն ամէն մեծ դեղագործներու և դեղի մթերանոցներու մէջ։ 52—7

ԿՐԷՇԱՄ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ, ԼՈՆՏՈՆ

Ընկերութեան գոյքը 1900 Դեկտեմբերին	ֆր. 191,934,570
Տարեկան հասոյթ ապահովագիններէ և տոկոսներէ, 1900 Դեկտ. 31ին	» 32,467,172
Վճարումներ՝ բանթ վիճակներու, ապահովագրութեան պայմանագիրներու, վերադարձումներու, են. Ընկերութեան հիմնարկութենէն՝ 1848էն ի վեր	» 426,499,043
1900ի տարեշրջանին մէջ Ընկերութիւնը 5556 ապահովագիր յանձնած է, որ կ'ներկայացնեն	» 52,981,500

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ընդհ. գործակալներուն՝
ԷՏՈՒԱՐՏՍ ԷՆՏ ՍԸՆ
Մէյտանճըգ փողոց, Ալալէմճի խան, Պոլիս, իսկ Ղալաթիոյ մէջ Ալեքսանտրի խան և Մէյտանճըլի խան, թիւ 8.

ՔԱԹՐԻՈԹԻՔ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.	ԿԱՐԴԻԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.
1824ին ՀԻՄՆՈՒԱԾ	1821ին ՀԻՄՆՈՒԱԾ
Դրամագլուխ 1,500,000 անգլ. ոսկի	Դրամագլուխ 2,000,000 անգլ. ոսկի

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ
Ընդհանուր գործակալը ԷՏՈՒԱՐՏ ԷՆՏ ՍԸՆ, Ալալէմճի խան Պոլիս,

ՊԱՅՄԱՆՔ "ԲԻՒԶԱՆԴԻՈՆ„Ի

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆԵԳԻՆ	3 Մէճ.
ՎԵՑԱՄՍԵԱՅ »	2 »
ԵՌԱՄՍԵԱՅ »	1 ½ »
ՁԵՌՔԷ ԳՆՈՂՆԵՐՈՒՆ	10 փր.
ԱՄՍԱԿԱՆ ԲԱԺ." Բօսդ լօխալով	1 Ղր.
ՏԱՐԵԿԱՆ Բօսդ-լօխալով	3 Մէճ.
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ	36 ֆր.
» ՎԵՑԱՄ. 18 ՖՐԱՆՔ.	9 ֆր.
ԱՐՏԱՍԱՀ. "ՏԱՐԵ." Բօսդ-լօխ.	40 ՖՐ.

ԱՆԳԼ. ԼԻՐԱ 119 ղրշ. — 20 ՖՐԱՆՔ 94½ ղրշ. — ՔՐԻՄԻԷ 55 ղրշ.

Նոյն պայմանք՝ Կ. Պոլսոյ և Գաւառի համար ԱՆՆՇՏԻՐ [illegible]

Նամակի [illegible] 20 հատ 1 ղրշ. [illegible] 20 ղրշ. է հաշուով, և ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿՈՎ։

[illegible]

Նոյնին անունը, [illegible] ՉԷՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒ։ [illegible] ՕՐՆ ՕՐԻՆ [illegible]

[illegible]

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՔԹ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

(ՎԿԱՅԵԱԼ ՓԱՐԻԶԻ)

ՄԱՍՆԱԳԷՏ

Կանանց հիւանդութեանց, մանկաբարձ, վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝ կրկին Բերա Սագըզ Աղաճ, թիւ 26, ուր հիւանդներ կ'ընդունի ամէն օր կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.)։

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ։

Կարօտ հիւանդները կ'դարմանէ Բերայի (Մ. Երրորդութեան եկեղեցւոյ) Ազքատախնամի դարմանատունը՝ ամէն հինգչաբթի առաւօտէն մինչև կէս օր։

Մասն. —Վիրաբուժական ուղղամարմնական (orthopédique), ծննդաբերական և ամէն կերպ արգանդի հիւանդութեանց չատ կարեւոր գործողութիւնները՝ հիւանդներու տուներուն մէջ կատարել ապահովութեամբ և մեծ յաջողութեամբ կարենալ կատարելու համար՝ գիտական առձեռն վերջին մեթոտներու համապատասխանող կատարելագործեալ գործիքներու մանրամասն ամբողջութիւնն հոգացուած է։ 24—21

Կ'ՅԻՇԵՑՆԵՆՔ [illegible] Դ. ԷՔՍՊ [illegible] ԱՄԲՈՂՋ [illegible] ՊԱՀԱՄ ԲԵՐԹ [illegible]

ԱՊԱՔԻՆՈՂՆԵՐՈՒՆ ԵՒ ՆԻՀԱՐՆԵՐՈՒՆ

Մեծ քաղաքներու մէջ չատ անգամ պատահած էք անշուշտ, մանկամարդ աղջիկներու եւ գեղատիպ տղոց, որոնք իրենց նիհար կազմուածքովն, տժգոյն դէմքով եւ սպառած մարմնով արգահատանքը կը չարժեն մարդու։ Անարիւնութեան զոհեր են ատոնք, որք կամ ազգասուութեան հետեւանօք՝ ցած, խոնաւ եւ հակառողջապահական տեղեր բնակիլ ստիպուած ըլլալով զրկուած են զօրանալէ եւ կամ հարուստ ընտանեաց զաւակներ, որոնց մասին որպէս անտեղի հոգածութիւնն ու կոյր խնամքը թոյլ, նիհար, տժգոյն եւ ակարակազմ ըրած է զիրենք։

Այս զաւակները զօրացնելու, ուժովցնելու եւ անոնց երեսին գոյները բերելու համար ազդու, զօրաւոր եւ միեւնոյն ժամանակ ամենէն դիւրամարսելի դեղ մը պէտք էր։ Ահա այս դեղը ՆՈՒՐԻԻ ԳԻՆԻՆ է, որ ձկան իւղէն չատ աւելի խօս պարունակելով հանդերձ անոր պէս զանեցուցիչ չէ. անկէ աւելի զօրաւոր է եւ խիստ քաղցրահամ։

ՆՈՒՐԻԻ ԳԻՆԻՆ չուտով կ'ազդէ եւ անհրաժեշտ դարման մ'է, ակարակազմ, նիհար ու տժգոյն անձանց, հիւանդութենէ ապաքինողներու եւ ծեր օրիորդներու համար։

Այս գինիին բաղադրութեանը մէջ խօսէն զատ, մեծ քանակութեամբ ալ քանքինա կայ, որուն կազդուրիչ, զօրացուցիչ եւ վերանորոգիչ ազդեցութիւնը հանրածանօթ է։

ՆՈՒՐԻԻ ԳԻՆԻԻՆ ազդեցութիւնն աշխարհի ամէն կողմն հռչակուած ըլլալով, չատ մը չահամոլներ անոր կեղծն ու խարդախեալ նմանութիւնը պատրաստած են եւ կը ջանան միամիտներուն հաւատացնել թէ, անոնք ալ Նուրիի ճշմարիտ գինիին ազդեցութիւնն ունին։ Բացարձակապէս պէտք չէ հաւատալ ընծայել այս կարգի խաբէական խօսքերու, ՆՈՒՐԻԻ ԳԻՆԻՆ է ՄԻԱՅՆ ԱՌՈՂՋԱՐԱՐ։

Կը ծախուի Կ. Պոլսոյ եւ գաւառներու մեծ դեղարաններուն եւ դեղի մթերանոցներուն մէջ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹՕՆ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ»Ի

Զարլզ Տիքընս (91)

Օլիվըր Թուիսթ

ԼԹ.

Մր. Բրէքիդ քիչ մը յանկարծակիի եկած՝ իրմէ վար դիրքով և մտաւորապէս տկար մէկու մը հետ մտերմութեան մէջ գտնուած ըլլալէն, յորմէ ետք, Սիքսի որպիսութիւնն հարցուց և գլխարկը դրաւ մեկնելու համար։

—Մարդ չեկա՞ւ, Դօպի, հարցաքննեց հրեան։

—Ոչ մէկը, պատասխանեց Բրէքիդ, օձիքը բարձրացնելով. խնդալու բան մը չէ հոս։

—Պէտք էր որ Ֆակին գեղեցիկ նուէր մը բերէիր ինծ հետդ, այսքան երկար ժամանակ տանդ պահպանութիւնն ըրած ըլլալուս։ Իրաւ որ նեղացայ և քնանալէն ուրիշ բան պիտի չընէի, եթէ այս պատանին քով չըլլար զոր զուարճացնելու ալ բարութիւնն ունեցայ։

Միեւնոյն ատեն, Դօպի Բրէքիդ խաղին թուղթերը վերցուց, միացեալ դրամը բաճկոնակին գրպանը դնելով արհամարհանքով, իբր թէ իրեն պէս մէկու մը չվայլեր այդ ըրածը, և դուրս ելաւ սենեակէն քալուածքով մը, որ Զայթլինկ փութաց պահ մը անոր հետեւիլ բաքանչանալու համար անոր գեղեցիկ կօշիկներուն ու սրունքներուն վրայ, յետոյ ներս դարձաւ յայտարարեց թէ չատ դժուար չէր եղած բարեկամանալ անոր հետ և թէ տեսակցութիւնը վեց բենսի եկած էր միջին հաշուով։

—Համակրելի տղայ մ'ես, ըսաւ հրեան Զայթլինկի ուսին զարնելով թեթեւօրէն և աչք ընելով իր աշակերտներուն։

—Մր. Բրէքիդն ալ հանած վարած մ'է, այնպէս չէ՞, Ֆակին, գոչեց Թօմ։

—Անշուշտ, սիրելիս, պատասխանեց հրեան։

—Աղէկ եղաւ հետը ծանօթանալս, շարունակեց Թօմ։

—Բնական է, կրնաս պարծենալ։ Ձե՞ս տեսներ որ կ'նախանձին քեզի հետ բարեկամացած ըլլալուն համար։

—Այո՛, գիտեմ որ կ'նախանձին, գիտ խաղին մէջ կողոպտեց, իրաւ է, բայց թէ որ ուզեմ, կրնամ կորսնցուցածս վաստկիլ, այնպէս չէ՞, Ֆակին։

—Հա՛րկաւ, հա՛րկաւ, պատասխանեց հրեան, ինծ կ'թուի որ եթէ հիմա 'երթաս, աղէկ կ'ընես։ Դուք ալ, Մաթէոս և Շարլօ, ճամբայ ելած ըլլալու էիք արդէն, ժամը տասնին մօտ է և բան մը չէք ըրած դեռ։

Այս վերջիններն հնազանդեցան, նշան ըրին Նանսիի և գլխարկնին դնելով դուրս ելան, ճամբան երկարօրէն կատակաբանելով Զայթլինկի վրայ։

Այս վերջնոյն ընթացքին մէջ տարօրինակ բան մը չկար սակայն։ Քանինե՛ր գիտեմ ես որ Զայթլինկէն աւելի կ'վճարեն լաւ ընկերութեանց մէջ մտնելու համար, և քանինե՛ր այս լաւ ըսուած ընկերութիւնը կազմող անձերէն որոց համբաւը Դօպի Բրէքիդի համբաւէն տարբեր չէ՛։

—Հիմա, ըսաւ հրեան Նանսիի՝ երբ մինակ մնացին, տակը պիտի համրեմ քեզի։ Ահա բանալին պզտիկ գզրոցի մը, ուր կ'պահեմ ինչ որ բերեն ինծ տղաքը։ Երբեք կղպանքի տակ չեմ դներ դրամս, որովհետեւ չունիմ անկէ. ա՛հ, որքան կ'ուզէի դրամ ունենալ և պահել զայն կղպանքի տակ։ Աս ըրածնիս խեղճուկ արհեստ մ'է, Նանսի, բայց կ'սիրեմ այս երիտասարդութիւնը չուրջս տեսնելով և վիշտ չեմ զգար եղածին վրայ։ Լռէ՛, ձայն մ'ի հաներ, ըսաւ հրեան բանալին ծոցը պահելով վայրկենաբար, մէկը կ'ուգայ, կ'լսե՞ս։

Մանկամարդ աղջիկն որ սեղանին առջեւ նստած էր, թեւերը խաչաձեւած, կարեւորութիւն չտալ ձեւացուց նոր եկողի մը, և անոր ո՛վ ըլլալուն, մինչեւ որ էրիկ մարդու մը ձայնը լսելի չեղաւ իրեն։ Այն ատեն, չտապով, գլխարկն հանեց և չալն ալ վրայէն առնելով սեղանին վրայ նետեց երկուքը մէկ։ Հրեան չէր տեսած աղջկան ճարտար շարժումն որով վայրկենաբար կրցեր էր ընել այս գործողութիւնը, և երբ իրեն դարձաւ, Նանսի սենեկին տաքութեանը վերագրեց իր ըրածը։

—Հօ՛գս, ըսաւ ինքնիրեն հրեան. եկողն իմ սպասած մարդս է։ Եւ աղջկան ուղղելով խօսքը.— Սանդուղներէն կ'իջնայ, բնաւ դրամի խօսք չընես Նանսի, անոր ներկայութեանը։ Տասը վայրկեանէն աւելի չի նստիր արդէն կ'երթայ։

Հրեան մատը չրթներուն տարաւ իբր լռութեան նշան և դէպի դուռն յառաջացաւ ճրագը ձեռքը. սանդուղին վրայ ոտքի ձայն մը լսուեցաւ, յետոյ անմիջապէս հիւրը ներս մտաւ սենեակէն և դէմ դիմաց գտնուեցաւ մանկամարդ աղջկան հետ զոր չէր նշմարած նախապէս։

Եկողը Մօնքս էր։

—Իմ աշակերտներէս մին է, ըսաւ հրեան, տեսնելով որ Մօնքս յետս կ'ընկրկէր ի տես անծանօթ դէմքի մը։

Նանսի սեղանին մօտեցաւ սակայն և վայրկեան մը Մօնքսը դիտեց անտարբեր ձեւով մը, բայց երբ ետին դարձաւ, իր ակնարկն հանդիպեցաւ հրեային սպառնալից և վայրագ նայուածքին զոր տեսնող մը պիտի չկարծէր որ քիչ մ'առաջ ուան մարդուն նայուածքն էր այդ։

—Լուր մ'ունի՞ք, հարցուց վերջապէս այս վերջինը։

—Կարեւոր լուրեր, պատասխանեց Մօնքս։

—Եւ յաջող, անանկ չէ՞, ըսաւ հրեան վարանոտ, իբրեւ թէ վախնալով որ իր խօսակիցը նեղացուցած կ'ըլլայ այսքան փութկոտութիւն դնելով հարցումին մէջ։

—Գէշ լուրեր չեն, շարունակեց Մօնքս ժպտագին. բաւական գործ տեսայ այս անգամ, կ'ուզէի երկու խօսք ընել ձեզի։

Մանկամարդ աղջիկը սեղանին քով ոտքի վրայ կ'կենար և երեւոյթէն՝ տեղէն երերալու փափաք մը չէր ցուցներ, թէեւ տեսած էր թէ Մօնքս մատովը զինքն յիշեցուցած էր հրեային։

Այս վերջինը վախնալով արդարեւ, որ աղջիկը դրամը պահանջելու կ'ելնէ եթէ դուրս հանելու ըլլայ զայն, նշան ըրաւ Մօնքսի որ իրեն հետեւի և ինքն ալ մէկտեղ դուրս ելաւ։

Նանսի ներսէն լսեց որ մարդը կ'ըսէր սանդուխէն ելած միջոցին։

—Նորէն դիս այդ գժոխային սենեակը մի՛ տանիր։

Հրեան կ'խնդար արտասանելով մէկ քանի բառեր զորս աղջիկը չիմացաւ, բայց անոնց ոտքի ձայնին չարունակութենէն գուշակեց որ երկրորդ յարկը կ'ելնէին։ Շուտով մը, ոտքէն կօշիկներն հանեց, չրջազգեստին ալ գլուխն ու թեւերը ծածկեց և դրան ետեւը, պահ մ'ականջ դրաւ, շունչը բռնելով։ Յետոյ, վերի աղմուկը դադրելուն պէս, դուրս խմյուցաւ սենեակէն և մութ տեղը սանդուղներէն վեր ելաւ ետեւնուն անհաւատալի արագաշարժութեամբ, քառորդ ժամ մը վերջ, վար կ'իջնէր դարձեալ նոյն դիւրութեամբ և գրեթէ վայրկեան մը չանցած՝ երկու էրիկ մարդիկ ալ կ'իջնէին վար. Մօնքս փողոց ելաւ ուղղակի և հրեան երեւցաւ նորէն դրամը տալու համար։

Նանսի, այս անգամ, գլխարկը դրած և չալն ուսին վրայ, պատրաստ կ'կենար մեկնելու համար։

—Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ այսքան դեղներ ես, Նանսի, գոչեց հրեան քայլ մը ետ երթալով և աշտանակը սեղանին վրայ դնելէ վերջ։

—Դեղնա՞ծ, կրկնեց Նանսի, ձեռքն աչքերուն վրայ դնելով լաւ մը դիտելու համար հրեան։

—Սոսկալի կերպով դեղնած, ըսաւ հրեան։ Ի՞նչ ըրիր արդեօք հոս մինակդ։

—Զգիտեմ, թերեւս երկար ատեն տասնկ ոտքի վրայ մնալէս եղայ։ Շուտ ըրէ որ տեղս երթամ, մ'ի մեղքնար գիս։

Հրեան դրամն համրեց, ամէն մէկ հատին հառաչ մ'արձակելով սրտին խորէն, յետոյ իրարու հետ ձեռք սեղմելով, բաժնուեցան։

Երբոր Նանսի ինքզինքը փողոցին մէջ գտաւ, դրան մը սեմին վրայ նստիլ ուզեց մէկ քանի վայրկեան. իր ճամբան մոռցած կ'թուէր ըլլալ։ Յանկարծ միտքը բան մ'ինկաւ և Սիքսի տան հակառակ ուղղութիւն մը բռնելով՝ սկսաւ վազել արագօրէն. յետոյ պահ մը կեցաւ չունչ առնելու համար, բայց զգալով որ անկարող էր ընելու ինչ որ իր միտքը կ'չարչարէր հիմա, բարկութենէն ձեռքերը խածաւ և սկսաւ լալ։

Արցունքները վերջապէս քարերը ազդեցութիւն մ'ըրած էին ջիղերուն վրայ, որովհետեւ մէկ վայրկեանի մէջ սա համոզումը գոյացուց իր մէջ թէ իրեն համակերպիլ միայն կ'մնար. հետեւաբար, ետ դարձաւ նորէն, հիմակ ալ կորուսած ժամանակը վաստկելու կամ գէշ մտածումները վանելու համար վազելով և փութով հասաւ այն տան առջեւ ուր աւազակը կ'սպասէր իրեն։

Թէեւ ներքնապէս խռովեալ, Մր. Սիքս ո՛չ և է գիտողութիւն չըրաւ Նանսիին տեսնելով, միայն հարցուց թէ դրամը բերա՞ծ էր, և հաստատական պատասխան մ'առնելով, գոհունակութեան ճիչ մ'արձակեց գլուխը բարձին վրայ թողուց և վերսկսաւ քնանալ։ Հետեւեալ օրը սակայն, Սիքս առտուընէ մինչեւ իրիկուն խմելով և ուտելով անցուց ստացած դրամին շնորհիւ և ժամանակ չունեցաւ, ոչ ալ փափաք, իր ընկերուհին խուզարկելու։

Սակայն այս վերջինը տխուր էր և մտածկոտ, մէկու մը պէս որ միտքը դրած կ'ըլլայ սովորականէն դուրս բան մ'ընել և չհամարձակիր։

Հրեան, իր սրատես աչքերովը, դիւրաւ պիտի կրնար գուշակել այս յուզումներուն պատճառը, բայց Սիքս իրեն չափ խորամանկ չէր և բանէ մ'ալ չկասկածեցաւ։ Արդէն սովորականէն աւելի ուրախ ըլլալուն, գրեթէ բնաւ ուշադրութիւն չէր ըրած Նանսիի, և անոր յուզեալ վիճակին։

CHARLES DICKENS—(Oliver Twist.)

(Շար.)